

**ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱԿ-Ի
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՑԸ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....էջ 3-9

Գլուխ Առաջին: ՄԱԿ-ի հիմնադրումը, կառույցների ձևավորման գործընթացը

1.1 ՄԱԿ-ի ձևավորման նախադրյալները.....էջ 10-22

1.2 ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումը և կառույցըէջ 23-33

Գլուխ Երկրորդ: ՄԱԿ-ի գործառույթները: Դերակատարումը միջազգային խաղաղության պահպանման և ամրապնդման գործում:

2.1. ՄԱԿ-ի գլխավոր մարմինների ձևավորումը. հիմնական գործառույթները.....էջ 34-55

2.2. ՄԱԿ-ի դերակատարումը միջազգային խաղաղության պահպանման և ամրապնդման.....էջ 56-69

Գլուխ Երրորդ: Պատմա-համեմատական մեթոդի կիրառումը ՄԱԿ-ի ձևավորումը և կառույցը թեմայի դասավանդման ընթացքում.....էջ 70-75

Եզրակացություն.....էջ 76-78

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ.....էջ 79-81

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) անկախ երկրներից բաղկացած միջազգային կազմակերպություն է, որոնք միավորվել են հանուն աշխարհի խաղաղության ու անվտանգության պահպանման, ինչպես նաև պետությունների միջև բազմակողմ համագործակցության զարգացման համար: Միջազգային խաղաղության պահպանման և աշխարհն առավել անվտանգ դարձնելու հիմնախնդրով այսօր զբաղվում են բազմաթիվ միջազգային կառույցներ: Նրանց շարքում բացառիկ նշանակություն ունի Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որն իր ստեղծումից ի վեր ջանք ու եռանդ չի խնայել հանուն աշխարհի խաղաղության: Միջազգային կազմակերպությունների ստեղծումը անցել է բավականին բարդ պատմական գործընթաց, դրանք մինչև ժամանակակից իմաստով վերջնական ձևավորվելը անցել են պատմական մի քանի էտապներ և կատարելագործվել հասարակության զարգացմանը զուգընթաց, նման կերպ է զարգացել նաև ՄԱԿ-ը: Համաձայնելով ընդունել ՄԱԿ-ի Կանոնադրությունը և ընդլայնելով միջազգային համագործակցությունը, երկրները խոստովանեցին, որ անհրաժեշտ է կարգավորել հարաբերությունները այն պետությունների հետ, որոնք մշտապես հակամարտություններ են առաջացրել և մարդկությանը պատճառել են անասելի վնասներ:¹

¹ <<Основные сведения об Организации Объединенных Наций>>, <<Международные отношения>> М., 1991, стр.11

Արդի աշխարհում, առավել քան կարևոր է միջազգային բազմակողմ համագործակցության զարգացումը, քանզի խաղաղության պահպանման հիմնախնդիրը շարունակում է օրակարգային մնալ բոլորի համար: Ավելին, միջուկային-տիեզերական դարաշրջանի պայմաններում այդ համագործակցությունը մարդկության գոյատևման հրամայականն է: Հետևաբար, միջազգային կազմակերպությունները և առաջին հերթին ՄԱԿ-ը պարտավոր են հետևողականորեն ձևավորել հավաքական անվտանգության այնպիսի համակարգ, որը կապահովի մարդկության անվտանգությունն ու խաղաղությունը: Այս համատեքստում չափազանց կարևոր է Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման, կառուցվածքի և գործառույթների պատմության ուսումնասիրումը, որին էլ նվիրված է մեր ավարտաճառը:

Թեմայի ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ այսօր առավել լուրջ քննարկման կարիք ունեն ժամանակակից աշխարհում ընթացող հակամարտությունների հետ կապված խնդիրները, որոնց լուծման համար պետք է հաշվի առնել ինչպես տվյալ ժամանակի գործոնները, այնպես էլ նախապատմությունը և տվյալ տարածաշրջանում ձեռնարկված ռազմական կամ քաղաքացիական գործողությունների հետևանքները: Այս հիմնահարցերը, որոնց արմատները առավել քան խորն են, պահանջում են շուտափույթ լուծում, իսկ դրա ճանապարհին միանշանակ անգնահատելի դեր է կատարում ՄԱԿ-ը: Վերջինս զգալիորեն ընդլայնել է անդամ պետությունների գործունեության շրջանակները: ՄԱԿ-ի նվաճումների ցանկը աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում բավականին տպավորիչ է: Խաղաղապահ ուժերը, որոնք ուղարկվել են կոնֆլիկտային տարածաշրջաններ, կանխել են ռազմական գործողությունների շարունակությունը, ժողովուրդները, որոնք նախկինում գտնվում էին գաղութային տիրապետության տակ, ձեռք են բերել անկախություն և լիարժեք ինքնիշխանություն: Կազմակերպության ջանքերով աշխարհի տարբեր ծայրերում գտնվող փախստականներին տրամադրվել է

ապաստան և աջակցություն: ՄԱԿ-ի լայն ներգրավվածությունը աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին արտացոլում է վերջինիս նպատակները: Չենք չափազանցնի եթե ասենք, որ աշխարհում տեղի ունեցած կամ ունեցող ոչ մի իրադարձություն չի վրիպել ու վրիպում ՄԱԿ-ի ուշադրությունից: Այս կառույցի գործունեությունը չի սահմանափակվում միայն խաղաղապահ առաքելությամբ, այլև ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրոնական, մշակութային, որոնց շրջանակներում ակտիվորեն համագործակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը, որն 1992թ հանդիսանում ՄԱԿ-ի անդամ:

Ավարտաճառի կառուցվածքը և բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանված են մի քանի ենթագլուխների, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից: Ներածությունում ներկայացված են ավարտաճառի նպատակները և խնդիրները, բարձրացված հարցերի արդիականությունն ու կարևորությունը, տրվում է օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլխում ներկայացված է Միավորված ազգերի կազմակերպության ստեղծման պատմությունն ու վերջինիս ձևավորման նախադրյալները, անդրադարձ է կատարվում երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված նոր աշխարհակարգին: Այս գլխում մանրամասն վերլուծվում ենք աշխարհաքաղաքական այն պայմանները, որոնք ստիպեցին աշխարհի տերություններին միավորվել մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Ներկայացվում է նաև ՄԱԿ-ի կանոնադրության մշակման և ընդունման ընթացքը:

Երկրորդ գլխում քննարկվում է ՄԱԿ-ի գլխավոր մարմինների ձևավորման գործընթացը, գլխավոր կառույցների ձևավորման գործընթացները, դրանց հիմնական գործառույթները: Անդրանդարձ է կատարվել նաև ՄԱԿ-ի՝ միջազգային խաղաղության

ամրապնդման գործում և միաջազգային հակամարտությունների խաղաղա կարգավորման գործում ունեցած դերակատարմանը:

Երրորդ գլուխը նվիրված է տվյալ թեմայի դասավանդման մեթոդիկային:

Եզրակացության մեջ ամփոփել ենք մագիստրոսական ատենախոսության հիմնական եզրահանգումները, ներկայացնելով նաև առաջ քաշված խնդիրների վերաբերյալ մեր դիրքորոշումը:

Աշխատանքի նպատակները և խնդիրներն.

Մեր մագիստրոսական աշխատանքի նպատակն է հենվելով թեմային առնչվող հրապարակված նյութերի, տեղեկությունների և գրականության վրա`

- ուսումնասիրել` թե միջազգային ինչպիսի՞ պայմաններում է հիմնադրվել ՄԱԿ-ը, ինչպիսի՞ նախադրյալներ կային դրա համար, հատկապես ո՞ր պետությունները որոշիչ դեր խաղաղացին դրա ձևավորման համար:
- Քննարկել այն բոլոր պայմանագրերն ու համաժողովները, որոնք հիմք հանդիսացան ՄԱԿ-ի ստեղծման համար:
- Պարզաբանել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում ՄԱԿ-ի Կանոնադրությունը, ե՞րբ է այն ընդունվել, և ըստ դրա որո՞նք են հանդիսանում կազմակերպության հիմնական նպատակներն ու սկզբունքները:
- Մեկնաբանել և համակողմանի ներկայացնել ՄԱԿ-ի կառուցվածքը, այն է, թե ի՞նչ մարմիններից է բաղկացած կազմակերպությունը, ի՞նչ դեր են կատարում դրանցից յուրաքանչյուրը, ինչպիսի՞ լիազորություններ ու գործառույթներ ունեն դրանք: Ինչպիսի՞ օժանդակ մարմիններ ունի և կարող է արդյո՞ք ունենալ կազմակերպությունը, որոնք են վերջինիս մասնագիտացված գործակալությունները, ի՞նչ աշխատանքներ են դրանք կատարում և որ բնագավառներում, ինչպե՞ս են նպաստում հասարակական կյանքի տարբեր բնագավառների զարգացմանը:

- Հետագոտել այն բոլոր միջոցառումների հիմնական մեխանիզմներն ու մեթոդները, որոնք կիրառում է ՄԱԿ-ը՝ ապահովելու համար միջազգային անվտանգությունը:
- Դիտարկել որոշ տարածաշրջաններում ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունները, որոնք նպատակաուղղվել են տարածաշրջանային վեճերի խաղաղ կարգավորմանը և կարողացել են լուրջ հաջողությունների հասնել:
- Վերլուծել թեմայի դասավանդման մեթոդիկայի առաննահատկությունները, ինչպես նաև պատմա-համեմատական մեթոդի կիրառումը տվյալ թեմայի շրջանակներում:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն

Վերը նշված խնդիրները պարզաբանելու համար օգտվել ենք բազմալեզու և տարբնույթ գրականությունից, որոնցից շատերը առանցքային նշանակություն են ունեցել ավարտական աշխատանքի շարադրման համար: Հատկապես կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում ռուս նշանավոր իրավաբան Սերգեյ Կոնյուվի աշխատությունը², որտեղ հանգամանորեն ներկայացված է ՄԱԿ-ի ստեղծման պատմությունը, թվարկված է վերջինիս հիմնադիր երկրների շարքը, նկարագրված է, թե ինչպե՞ս և երբ ընդունվեց Միավորված ազգերի Հռչակագիրը, ի՞նչ էր այն իրենից ներկայացնում, գրքում առանձնակի ուշադրություն է դարձվում Մոսկվայի կոնֆերանսին, որտեղ քննարկվող հարցերից կարևորվում էր հատկապես ՄԱԿ-ի ստեղծման խնդիրը: Ս. Կոնյուվը ՄԱԿ-ին նվիրված բազմաթիվ աշխատություններ ունի, դրանցից է նաև իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վսեվոլոդ Դուրդեննսկու հետ համատեղ գրված մի աշխատություն ևս³: Այն իրենից ներկայացնում է հիմնականում ՄԱԿ-ին նվիրված փաստաթղթերի ժողովածու, որոնց ուսումնասիրությունը շատ կարևոր էր աշխատանքի շարադրման համար: Կազմակերպության ստեղծման նախադրյալներին են անդրադարձել նաև Ս. Մալինինը

² Крылов С. Б., История создания Организации Объединенных Наций, М., 1960

³ Дурденевский В.Н., и Крылов. С. Б. Организация Объединенных Наций.Сборник документов. М., 1956

և Ռ.Բոբրովը՝ իրենց համատեղ գրքում⁴: ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքերի ուսումնասիրման համար հիմք է հանդիսացել միջազգայնագետ, իրավաբան Գենադի Եֆիմովի աշխատությունը⁵, որը ամբողջովին նվիրված է ՄԱԿ-ի Կանոնադրությանը: Վերջինիս նվիրված համատեղ աշխատություն են գրել նաև նշանավոր գիտնական Ֆյոդոր Կոժնիկովը և իրավաբանական գիտությունների դոկտոր Անատոլի Մովչանը⁶: ՄԱԿ-ի գլխավոր մարմինների գործունեությանը նվիրված ևս բազմաթիվ աշխատություններ կան գրված, օրինակ Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի ուսումնասիրության համար, առանձնակի ուշադրության են արժանի Գ. Եֆիմովի⁷ և Վ. Ֆյոդորովի⁸ գրքերը, որոնք առանձին-առանձին քննարկում են այդ մարմինների գործունեությունը:

Անվտանգության խորհրդին անդրադարձել է հատկապես ամերիկացի իրավաբան Հանս Բելզենը, իր աշխատության մեջ⁹ մեծապես կարևորելով այդ մարմնի դերը միջազգային խաղաղության ու պահպանման գործում: Անվտանգության խորհրդի մասին հիմնարար աշխատություն է գրել Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ռ. Մաքիվերը:¹⁰ Այս ամենից զատ, հարկ է նշել, որ ՄԱԿ-ը աշխարհով մեկ սփռված իր գործակալությունների միջոցով բազմաթիվ գրքեր է հրատարակում, որոնցում ներկայացվում են կազմակերպության գործունեության մասին՝ ամենատարբեր բնագավառներում, դրանք թարգմանվում են բազմաթիվ լեզուներով, հասանելի լինելով մարդկությանը: Դրանցում համառոտ ներկայացվում է կազմակերպության պատմությունը՝ ստեղծումից մինչև գլխավոր մարմիններ, այդ

⁴Бобров Р.Л., Малинин С. А., Организация Объединенных Нации, Издательство Ленинградского университета, 1960

⁵Ефимов Г.К., Устав ООН, Инструмент мира Главная редакция изданий для зарубежных стран издательство Науки, 1986

⁶ Кожевников Ф. И., Мовчан А. П., Устав ООН, М., 1955

⁷Ефимов Г. К., Генеральная Ассамблея ООН М., 1969

⁸Федоров В. Н. , Совет Безопасности ООН, Международные отношения., М., 1965

⁹Kelsen H., The Law of the Inited Nations, A Critical Analysis of its Fundamental Problems, N.Y., 1950

¹⁰ Maciver R., The Natins and United Nations, N. Y., 1959

աշխատությունները արժարժում են բազմաթիվ բնագավառների վերաբերող խնդիրներ, ներկայացնում ՄԱԿ-ի կողմից դրանց լուծման ուղիներն ու մեթոդները, կոչ են անում աշխարհի բոլոր պետություններին միասնաբար հանդես գալ համընդհանուր խնդիրների լուծման ճանապարհին:¹¹ Այս ամենի մասին տեղակտվություն են պարունակում նաև ՄԱԿ-ի պաշտոնական կայքերը, որոնք վերաբերում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, անվտանգության և այլ բնագավառներին:¹² ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը ևս բազմաթիվ գրքույկներ է հրատարակում և թարգմանում:¹³



¹¹ Everything you Always Wanted to Know About the United Nations by United Nations. United Nations Department of Public Information, New York, 2008

¹² www.un.org.

¹³ <<ՄԱԿ-ի մոդել>> Երևան 2005թ, <<Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին>> Երևան 2002թ, ՄԱԿ-ի Հազարամյակի Հռչակագիր 8 սեպտեմբեր, 2000թ.

Գլուխ Առաջին

ՄԱԿ-ի հիմնադրումը, կառույցների ձևավորման գործընթացը

1.1 ՄԱԿ-ի ձևավորման նախադրյալները.

<<Միավորված ազգեր>> անվանումն առաջարկել է ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: Այն առաջին անգամ կիրառվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1942թ. հունվարի 1-ին Վաշինգտոնում՝ Սպիտակ տանը <<Միավորված ազգերի հռչակագրում>>, երբ 26 պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին շարունակել համատեղ պայքարը ֆաշիստական դաշինքի երկրների դեմ:¹⁴

Ընդհանրապես, աշխարհում առաջին խաղաղարար համաժողովը անցկացվել է 1889թ. Հաագայում: Այն ստացավ խաղաղության համաժողով անվանումը, քանի որ հիմնական նպատակն էր ձգնաժամերի խաղաղ կարգավորման, պատերազմների կանխման, սպառազինությունների կրճատման և պատերազմական օրենքների կարգավորման փաստաթղթեր մշակելը: Սպառազինությունների կրճատման հարցում այն, սակայն, ոչ մի էական հաջողության չհասավ: Միայն որոշ դրույթներ ընդունվեցին ռազմական ծախսերի կրճատման մասին, որոնցով այժմ ծանրացած է ամբողջ աշխարհը: Այն ընդունեց Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման հռչակագիրը և հիմնեց Միջազգային իրավարար դատարանը, որը սկսել է գործել 1902 թվականից:

Պետությունների խաղաղ համայնքի ստեղծման գաղափարի, ջատագովներից հայտնի գերմանացի փիլիսոփա Էմանուել Կանտը, դեռ 1795 թվականին իր <<Հավերժական Խաղաղություն>> փիլիսոփայական աշխատությունում, ընդգծել էր հակամարտությունները կարգավորող և խաղաղությանն աջակցող պետությունների լիզայի գաղափարը:¹⁵ Այստեղ Կանտը առաջ էր քաշել ոչ թե համաշխարհային

¹⁴ Основные сведения об Организации Объединенных Наций, <<Международные отношения>>, М., 1991, стр.13

¹⁵ Кант И., К Вечному миру, М., 1989 стр.385

կառավարության գաղափարը, այլ հույս էր հայտնել, որ յուրաքանչյուր պետություն՝ հռչակելով իրեն ազատ, կպարտավորվի հարգել իր քաղաքացիներին և այլ ազգերի ներկայացուցիչներին: Հենց սա կարող է հանդիսանալ պետությունների համատեղ խաղաղ գոյակցության հնարավորության հիմքը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մարդկության դեմ կատարված հանցագործություններն ըստ էության ի ցուց դրեցին այն ավանդական տեսակետի սնանկությունը, թե սեփական քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը բացառապես յուրաքանչյուր պետության ներքին գործն է:

Հարկ է նշել, որ մինչ ՄԱԿ-ի ձևավորումը աշխարհում կար միջազգային խաղաղության պահպանման համար ստեղծված մեկ այլ կառույց՝ ի դեմս Ազգերի լիգայի, որն ձևավորվել է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1919թ. Փարիզի վեհաժողովում: Վերջինիս նպատակն էր. «Հետևել միջազգային խաղաղության պահպանմանը, հակամարտությունները լուծել միայն խաղաղ բանակցային ճանապարհով, նպաստել միջազգային համագործակցության խորացմանը, հասնել խաղաղության ու անվտանգության»>: Լիգայի ստեղծման գաղափարի հիմնաքարն էր հանդիսանում ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնի «Խաղաղության 14 կետերը» որը նա ներկայացրեց ԱՄՆ Կոնգրեսին 1918-ի հունվարի 8-ին: Հենց վերջին՝ տասնչորսերորդ կետում ասվում էր, որ պետք է ստեղծվի հատուկ դաշնագրերով սահմանված պետությունների ընդհանուր միություն, որը պետք է նպատակ ունենա փոխադարձ հավասար երաշխիքներ տրամադրել մեծ ու փոքր պետությունների քաղաքական անկախությանն ու տարածքային ամբողջականությանը: Այսպես, Փարիզի հաշտության վեհաժողովը (18 հունվարի 1919 – 21 հունվարի 1920) ընդունեց Ազգերի Լիգայի ստեղծման առաջարկը: Որի կանոնադրությունը համարվում էր ուժ գործադրելու և պատերազմ սկսելու իրավունքի վերահսկման սկիզբը: Այն չէր արգելում պատերազմին դիմելու հնարավորությունը,

սակայն փորձում էր վերահսկել դա: Ազգերի Լիգայի Կանոնադրության 11-րդ հոդվածը սահմանում էր, որ ցանկացած պատերազմ կամ պատերազմի սպառնալիք, անկախ այն բանից, թե այն անմիջականորեն ազդում է Լիգայի որևէ անդամի վրա, թե ոչ, հանդիսանում է Լիգայի մտահոգության առարկա, և որ վերջինը պետք է ձեռնարկի բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ և արդյունավետ կհամարի պետությունների միջև խաղաղությունն ապահովելու համար:

Սակայն, Ազգերի լիգան իր ստեղծման հենց սկզբից հանդիպեց դժվարությունների, օրինակ ԱՄՆ-ը, որը հանդիսանում էր Ազգերի լիգայի և մանդատային համակարգի գլխավոր ճարտարապետը, չմտավ Լիգայի կազմի մեջ, քանի որ Սենատը չէր վավերացրել Վերսալյան համակարգը: Մյուս կողմից Խորհրդային Միությունը չընդունվեց Ազգերի լիգա՝ կոմունիստական կառավարություն ունենալու պատճառաբանությամբ: Լիգայի անդամ պետությունները պարտավորվեցին ոչ մի երկրի թույլ չտալ պատերազմ սանձազերծել: Սակայն, փաստացի Ազգերի լիգան դադարեց գործելուց, երբ 1939թ. հիտլերյան Գերմանիան ներխուժեց Չեխոսլովակիա և Լեհաստան՝ սկիզբ դնելով Երկրորդ համաշխարհային պատերազմին:

Արդեն 1941 թ. ամռանը ԽՍՀՄ-ի, Անգլիայի և ԱՄՆ-ի գլխավորությամբ սկսեց ձևավորվել հակահիտլերյան կոալիցիան: Բնականաբար առաջացավ Գերմանիայի և Ճապոնիայի դեմ պատերազմող երկրների ռազմական դաշինքի իրավական գրանցման հարցը: Փաստորեն Ազգերի Լիգայի ձախողումը, հակահիտլերյան կոլիցիայի երկրների առջև դրեց ագրեսորների պարտությունից հետո, խաղաղության պահպանման միջազգային կազմակերպության ստեղծման խնդիր: Որի համար անհրաժեշտ էր պատերազմից հետո համակարգել դաշնակից երկրների հավաքական ջանքերը:

Մինչ այդ, 1941թ. հունիսին Արևմտյան Եվրոպան գրեթե ամբողջությամբ ընկած էր ֆաշիստական երկրների իշխանության ներքո: Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք

Լոնդոնը արդեն ապրել էր քսաներկուամսյա պատերազմ և անընդհատ ենթարկվում էր օդային հարձակումների: Սակայն Լոնդոնում և նրա դաշնակից պետություններում վերջնական հաղթանակի հավատը մնում էր անդրդվելի: Միաժամանակ նրանք մշակում էին պատերազմից հետո խաղաղության հաստատման պլանը.

<<Արդյո՞ք մենք պատերազմից հետո էլ պետք է ապրենք նոր պատերազմի սկսման մշտական վախով: Արդյո՞ք մենք պետք է սահմանափակվենք միայն ռազմական հաղթանակով: Մենք պետք է մտածենք ավելիի մասին, պետք է ստեղծենք լավագույն պայմաններ բոլոր պետությունների և ազգերի համար և այդպիսով արմատախիլ անենք պատերազմների առաջացման պատճառները>>:¹⁶

Հունիսի 12-ին Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Հարավային Աֆրիկայի, Հունաստանի, Բելգիայի, Չեխոսլովակիայի, Հոլանդիայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Հարավսլավիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները հավաքվեցին Լոնդոնի հնադարյան Սան-Ջեմյան պալատում և ստորագրեցին հռչակագիր: Այս հռչակագրի հետևյալ դրույթը մինչև այսօր էլ հանդիսանում է խաղաղության կարգախոս.

<<Հաստատուն խաղաղության միակ հիմքը հանդիսանում է ազատ ազգերի կամավոր համագործակցությունը աշխարհում, որտեղ, ազատվելով պատերազմի սպառնալիքից, բոլորը կարող են օգտվել տնտեսական և սոցիալական ապահովածությունից, այս նպատակին հասնելու համար, մենք նպատակադրվում ենք աշխատել միասին բոլոր ազգերի հետ, ինչպես պատերազմի, այպես էլ խաղաղության ժամանակ>>:

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո մարդկությունը ևս մեկ անգամ <<Ոչ>> ասաց պատերազմին, որը այս անգամ իլեց 50 միլիոնից ավելի մարդու կյանք: Այսպիսի պայմաններում անհրաժեշտություն

¹⁶ www.un.org/russian/basic/aboutun.

առաջացավ ստեղծելու այնպիսի մի կազմակերպություն, որը պիտի ապահովեր միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը: Այդ խաղաղապահ կառույցը լինելու էր Միավորված ազգերի կազմակերպությունը, որի հիմնաքարը դրվեց հակահիտլերյան խմբավորման ձևավորման ժամանակ:

Դաշնակիցների ռազմական ջանքերին ուղեկցում էին պատերազմի քաղաքական նպատակների շուրջ կազմակերպվող միջազգային կարևոր հանդիպումները: Լոնդոնյան հռչակագրից հետո կատարվեց միջազգային կազմակերպության ստեղծման մի նոր քայլ: Դա ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Ռուզվելտի և Անգլիայի վարչապետ Ու. Չերչիլի պատմական հանդիպման արդունքն էր՝ հաճանավի վրա, Նյուֆաունդլենդի մոտ (Կանադա): 1941թ. օգոստոսի 14-ին նրանք հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որն ավելի հայտնի է «Ատլանտյան խարտիա» անվանումով:

Համաձայն «Ատլանտյան խարտիայի» ամրագրվում էին ութ հիմնական կետեր: Երկու երկրների ղեկավարները համատեղ քննարկումներից հետո, համաձայնեցրին իրենց երկրների քաղաքականությունը և որոշ ընդհանուր սկզբունքներ, որոնց վրա նրանք պետք է հիմնեին աշխարհի արժանապատիվ ապագան:

«Ատլանտյան խարտիայի» ութ կետերը հետևյալն էին.

1. ԱՄՆ-ը և Անգլիան չպետք է տարածքային նվաճումների ձգտեին:
2. Չպետք է ընդունեին որևէ տարածքային փոփոխություն՝ առանց շահագրգիռ ժողովուրդների համաձայնության:
3. Պետք է հարգեին բոլոր ժողովուրդների իրավունքները՝ կամովին ընտրելու իրենց երկրի կառավարման ձևը և օգնեին վերստանալու իրենց իրավունքները այն ժողովուրդներին, որոնք բռնի կերպով զրկվել էին իրենց ինքնուրույնությունից:
4. Պատշաճ կերպով հետևեին իրենց պարտավորություններին՝ ապահովելով այնպիսի իրավիճակ, որի պայմաններում բոլոր պետությունները՝ մեծ թե փոքր,

հաղթած կամ հաղթված համընդհանուր հումքի աղբյուրների և առևտրի բնագավառներում ունենան հավասար պայմանների իրավունք, իսկ վերջինս անհրաժեշտ է այդ երկրների տնտեսական բարգավաճման համար:

5. Ձգտեին տնտեսական դաշտում բոլոր երկրների միջև հասնել ամբողջական համագործակցության, որը նպատակ էր հետապնդում զարգացնել տնտեսությունը, և նրանց համար ավելի բարձր կենսամակարդակ ապահովել:
6. Նացիստական խմբավորման դեմ վերջնական հաղթանակից հետո ստեղծել այնպիսի խաղաղություն, որը հնարավորություն կտար բոլոր երկրներին իրենց սեփական տարածքներում ապրել անվտանգ պայմաններում՝ առանց վախի և կարիքի:
7. Ծովերի և օվկիանոսների ազատություն:
8. Նրանք համոզված էին, որ աշխարհի բոլոր երկրները պետք է հրաժարվեն ծովային, ցամաքային և օդային ռազմական գործողություններից, քանի որ դրանք հակասում են համընդհանուր խաղաղությանը:¹⁷

Հռչակագիրը նշում էր, որ մինչև հուսալի համընդհանուր անվտանգության համակարգ ստեղծելը, այդ տիպի ագրեսիվ գործողությունները պետք է անպայման վնասազերծել, քանի որ աշխարհին ապագա չի ունենա: Հռչակագրի մասնակից պետությունները հայտարարեցին, որ նրանք հավանություն կտան բոլոր այն միջոցառումներին, որոնք ուղղված էին ազատագրել խաղաղասեր ժողովուրդներին սպառազինությունների բեռից:

Ըստ էության, Ատլանտյան խարտիան պայմանագիր չէր երկու տերությունների միջև: Այն չէր հանդիսանում նաև խաղաղության հաստատման ծրագիր, ինչպես նշված էր այդ փաստաթղթում, այն միայն հաստատում էր «անկախ պետությունների ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները»:

¹⁷ Крылов С.Б., , նշ. աշխ., էջ 15-16

Այսպիսով, այն հռչակում էր ինքնիշխանություն, տարածքային անձեռնմխելիություն, պետությունների միջև տնտեսական համագործակցություն և անվտանգություն:

Այս ամենի հետ մեկտեղ, «Ատլանտյան խարտիան» շրջանցեց այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք էին.

1. Միջազգային ռազմական ուժերի ստեղծում՝ խաղաղության պահպանման համար, ավելի լայն իմաստով անվտանգության միջազգային կազմակերպության հիմնում:
2. Միջազգային կազմակերպությունների խաղաղ կարգավորում՝ մասնավորապես միջազգային դատարանի ստեղծում:
3. Ֆաշիզմի դեմ պայքար, պատերազմի հանցագործների պատժում և այլն:¹⁸

Չնայած թերի կողմերին, «Ատլանտյան խարտիան» պարունակում էր հետպատերազմյան աշխարհի կարգավորման մի շարք կարևոր սկզբունքներ: Այն ցույց էր տալիս միջազգային կազմակերպության ստեղծման իրական հնարավորությունը, որը հիմնված կլինի համամարդկային արժեքների վրա: Այն փաստը, որ խարտիան չուներ բարձր իրավաբանական ուժ, այնուամենայնիվ չէր նսեմացնում նրա նշանակությունը:

Չերչիլի և Ռուզվելտի հանդիպումից հետո, Լոնդոնում տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին տասը երկրների ներկայացուցիչներ: Նրանք պարտավորվեցին ամրապնդել համագործակցությունը և ցույց տալ հնարավոր օգնություն, որը կյանքի էր կոչում «Ատլանտյան խարտիայի» հիմնարար սկզբունքները: 1941թ. սեպտեմբերի 24-ին Խորհրդային կառավարությունը պաշտոնապես միացավ «Ատլանտյան խարտիային»: Խարտիային միացան նաև

¹⁸ Woolsey L. H., , The American Journal of International Law 1942, p. 623.

որոշ եվրոպական երկրներ՝ Բելգիան, Չեխոսլովակիան, Հունաստանը, Լյուքսեմբուրգը, Հոլանդիան, Նորվեգիան, Լեհաստանը, Հարավսլավիան և Ֆրանսիան:

1942թ. հունվարի 1-ին ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Ռուզվելտը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը, Խորհրդային միության անունից Մ. Լիտվինովը, և Չինաստանի անունից Ցզե-վենը ստորագրեցին մի փաստաթուղթ, որը դարձավ «Միավորված ազգերի կանոնադրությունը»:¹⁹ Հաջորդ օրը այս փաստաթուղթը ստորագրեցին ևս 22 պետությունների ներկայացուցիչներ:

Այս հռչակագիրը ավարտին հասցրեց հակահիտլերյան խմբավորման օրինականացումը: Փաստորեն, խմբավորման մասնակիցները ստացան «Միավորված ազգեր» անվանումը և ձևավորեցին ՄԱԿ-ի ստեղծման հիմնական նախադրյալները:¹⁹

Այս կարևորագույն փաստաթուղթը ստորագրած պետությունները հանձն առան հետևյալ երեք պարտավորությունները (արտահայտված երկու կետերով).

1. Օգտագործել բոլոր ռազմական և տնտեսական ռեսուրսները հաղթանակի հասնելու համար
2. Համագործակցել սույն հռչակագրի մյուս բոլոր մասնակիցների հետ և չկնքել անջատ հաշտություն՝ թշնամու և նրա դաշնակիցների հետ:²⁰

Հռչակագրին բացի բուն մասնակիցներից միացան նաև Մեծ Բրիտանիայի դոմինիոնները՝ Ավստրալիան, Կանադան, Նոր Զելանդիան, Հարավաֆրիկյան Միությունը և Հնդկաստանը: Կենտրոնաամերիկյան հետևյալ պետությունները՝ Կոստա-Ռիկա, Կուբա, Հաիթի, Հոնդուրաս, Նիկարագուա, Պանամա: Եվրոպական պետություններից՝ Բելգիան, Լյուքսեմբուրգը, Չեխոսլովակիան, Հունաստանը, Նիդեռլանդերը, Նորվեգիան, Լեհաստանը և Հարավսլավիան:

¹⁹ «Внешняя политика Советского Союза в период Отечественной войны» том I, М., 1946, стр. 194.

²⁰ Бобров Р. Л., Малинин С. А., նշ. աշխ., էջ 5:

Այսպիսով, հոչակագրի մասնակիցները հայտարարեցին իրենց այն համոզման մասին, որ. <<Թշնամիների դեմ տարած լիարժեք հաղթանակը անհրաժեշտություն է աշխարհի խաղաղությունը, պետությունների ինքնուրույնությունը, մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները ապահովելու համար>>:

Պատերազմի ընթացքում տեղի ունեցած բեկումը, հատկապես հրատապ դարձրեց դաշնակիցների ռազմական քաղաքականության համաձայնեցման և հետպատերազմյան աշխարհի խնդիրների քննարկման անհրաժեշտությունը: Այդ նպատակներով տեղի ունեցան մի շարք հանդիպումներ:

Այդ հանդիպումներից մեկն էլ 1943թ. հոկտեմբերի 19-30-ը Մոսկվայում տեղի ունեցած ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարների խորհրդաժողովն էր: Որի մասնակիցները ընդունեցին <<Ընդհանուր անվտանգության վերաբերյալ>> հոչակագիրը, որին միացավ նաև Չինաստանը:

Մոսկվայի հոչակագիրը կարևորագույն քայլ էր միավորված ազգերի համընդհանուր ջանքերի միավորման առումով: Այն դրեց միջազգային անվտանգության կազմակերպության հիմքերը: Համաժողովի ամենամեծ նշանակությունը նաև կայանում է նրանում, որ այստեղ ընդունված որոշումները անմիջապես արտահայտում էին միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման նկատմամբ մեծ տերությունների ունեցած պատասխանատվության գաղափարը: Նրանք պայմանավորվեցին մշտապես խորհրդակցել միմյանց հետ և համաձայնեցնել իրենց գործողությունները: Հարկ է նշել, որ Մոսկվայի համաժողովը միջազգային քննարկման առարկա դարձրեց նաև գաղութային հարցերը:

ԱՄՆ-ը հանդես եկավ գաղութային հարցի շուրջ առաջարկությամբ, որը վերաբերում էր գաղութների վերաբաշխմանը և դրանով իսկ, այն առաջին հերթին ուղղված էր Մեծ Բրիտանիայի և ֆրանսիայի շահերի դեմ: ԱՄՆ-ը իր առաջարկությունում խոսում էր գաղութային տարածքների բնական ռեսուրսների

մշակման անհրաժեշտության և այլ հարցերի մասին, այդ կերպ ցանկանալով մաքրել ամերիկյան կապիտալիզմի ճանապարհը: Գաղութներում քարոզելով ժողովրդավարություն՝ ԱՄՆ-ը քողարկում էր դրանց հետ կապված իր նպատակները:

Այսպես, 1943թ. հոկտեմբերի 24-ին ամերիկյան պատվիրակությունը Միավորված ազգերի հռչակագրին ներկայացրեց մի ծրագիր, որը վերաբերում էր գաղութների ազգային անկախությանը: Ծրագիրը հայտարարում էր, որ Միավորված ազգերի նպատակներից ու պարտականություններից մեկը պետք է լինի համագործակցությունը գաղութների հետ, որպեսզի վերջիններս հնարավորինս արագ ձեռք բերեն ազգային անկախություն: Ըստ այդ ծրագրի Միավորված ազգերի մեջ մտնող երկրները նույնպես պետք է պաշտպանեն գաղութային ժողովուրդներին, խրախուսեն նրանց, ցուցաբերեն բարոյական և նյութական օգնություն, մշտապես ջանքեր գործադրեն նրանց տնտեսական, քաղաքական, սոցիալական և կրթական առաջընթացի համար:

Սակայն, Անգլիան ելնելով գաղութային հարցերում իր շահերից, դեմ հանդես եկավ ամերիկյան ծրագրին և այս հարցի հետագա քննարկումները շարունակվեցին 1945թ. Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսում:

1943թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը Ֆ. Ռուզվելտը, Ու. Չերչիլն ու Ի. Ստալինը Թեհրանում վերահաստատեցին 1943թ. հոկտեմբերի 30-ի հռչակագիրը՝ կապված միջազգային նոր կազմակերպության ստեղծման հետ:

Թեհրանի խորհրդածողովից հետո սկսվեցին միջազգային այդ նոր կազմակերպության կանոնադրության ստեղծման նախապատրաստական աշխատանքները: Այդ աշխատանքները իրականացնում էին ինչպես մասնակից պետությունների պաշտոնական ներկայացուցիչները, այնպես էլ հասարակական և գիտական կազմակերպությունները, անգամ առանձին անհատներ:

Մեծ տերությունների ղեկավարների հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ 1944թ. աշնանը Վաշինգտոնի (Կոլումբիայի շրջան) Դումֆարթոն–Օքսի առանձնատանը: Երբ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները քննարկեցին խաղաղության և անվտանգության պահպանման միջազգային կազմակերպության՝ ՄԱԿ-ի կազմավորման հիմնահարցերը, ինչպես նաև նրա Կանոնադրությունը:

Այս հանիպման բանակցությունները կրում էին նախնական բնույթ և ձգվեցին մինչև 1944թ. սեպտեմբերի 28-ը, դրանց արդյունքները հաստատվեցին նաև Չինաստանի կողմից, որը բանակցում էր Անգլիայի և ԱՄՆ-ի պատվիրակությունների հետ: Խորհրդածոդովում հաստատվեց «Միավորված Ազգեր» անվանումը:²¹ Այս ամենով հանդերձ, ընդգծվում էր հետպատերազմյան աշխարհում դաշնակիցների համագործակցության պահպանման և շարունակականության անհրաժեշտությունը: Դումֆարթոն–Օքսում համաձայնության եկան ՄԱԿ-ի Կանոնադրության նախնական դրույթների վերաբերյալ և դրվեցին վերջինիս հիմքերը: Նախագծի համաձայն, ՄԱԿ-ի ղեկավար մարմինները հանդիսանում էին Գլխավոր ասամբլեան, որը կազմված էր ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններից և Անվտանգության խորհուրդը, որի մեջ պետք է մտնեին 5 մշտական և 6 ժամանակավոր անդամներ:²² Անվտանգության խորհրդի մշտական անդամները պետք է դառնային ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը և Ֆրանսիան: Գլխավոր ասամբլեայի որոշումները կրում էին խորհրդակցական բնույթ, այսինքն պարտադիր չէին: Խաղաղության և անվտանգության պատասխանատվությունը դրված էր Անվտանգության խորհրդի վրա, որի կայացրած որոշումները պարտադիր բնույթ էին կրում:

²¹ Организации Объединенных Наций, «Краткий справочник», составатели Березовский В.Н., Игнатов В. Л., Титаренко А.А., Шульгин В.В., Межд. Отношения М., 1985, стр., 11.

²² История новейшего времени стран Европы и Америки 1918-1945, под ред.Е.Ф.,Языкова, М., 1989 стр., 427

Հաշվի առնելով Անվտանգության խորհրդի հույժ կարևոր դերը, Խորհրդային Միությունը առաջարկեց, որպեսզի վերջինիս կայացրած որոշումները ընդունվեն մեծ տերությունների միաձայն սկզբունքի հիման վրա: Սակայն ԱՄՆ-ի և Անգլիայի միջամտության պատճառով այդ հարցը չլուծվեց: Փաստորեն, մեծ տերությունները չկարողացան պայմանավորվել Անվտանգության խորհրդում քվեարկության կարգի վերաբերյալ:

ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի միջև համագործակցության կարևոր փուլ հանդիսացավ Ղրիմի խորհրդածողովը: Այսպես, 1945թ. փետրվարի 4-11-ին ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Ռուզվելտը, Անգլիայի վարչապետ Ու. Չերչիլը և ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինը հանդիպիցեն Յալթայում: Խորհրդածողովը ընդունեց «<Եվրոպայի ազատագրման>> հռչակագիրը,²³ որտեղ ասվում էր, որ ԱՄՆ-ը, ԽՍՀՄ-ը և Անգլիան պետք է համաձայնեցնեն իրենց դիվանագիտությունը, որպեսզի օգնեն ազտագրվող ժողովուրդներին վերացնելու նացիզմի վերջին հետքերը և ֆաշիզմը, և իրենց սեփական ընտրությամբ ստեղծեն ժողովրդավարական ինստիտուտներ:

Ղրիմի խորհրդածողովի երրորդ լիազումար նիստը, որը տեղի ունեցավ փետրվարի 6-ին, իր աշխատանքները սկսեց այն հարցերի քննարկումներից, որոնք կիսատ էին մնացել Դունֆարթոն-Օքսում: Այսպիսով քննարկվեց և լուծվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քվեարկության կարգի վիճելի հարցը: Նրանք համաձայնեցին, որ Անվտանգության խորհրդում քվեարկության կարգ գործի: Այսինքն խորհրդի մշտական անդամներին ընձեռվում էր «<վետոյի իրավունք>> (լատ.veto-արգելում եմ, այսինքն՝ անըդունելի որոշումների նկատմամբ արգելք):1944թ. դեկտեմբերի 5-ին Ֆ. Ռուզվելտը ամերիկայի կառավարության անունից հանդես եկավ Անվտանգության խորհրդի քվեարկության կարգի շուրջ նոր առաջարկությամբ: Ըստ դրա միաձայնության սկզբունքը պահպանվում էր բոլոր հարցերի համար,

²³ История новейшего времени стран Европы и Америки 1918-1945, под ред.Е.Ф.,Языкова, М., 1989 стр.,428

բացառությամբ՝ ընթացակարգային հարցերի: Վեճի կողմնակից պետությունը, թեկուզ և մեծ տերություններից պարտավոր է ձեռնպահ մնալ Անվտանգության խորհրդում քվեարկելուց այն դեպքում, երբ խոսքը գնում է վեճերի խաղաղ կարգավորման մասին: Ղրիմի խորհրդածոդովում ԽՍՀՄ-ը և Անգլիան ընդունեցին Ռուզվելտի այդ առաջարկությունը:²⁴ ԱՄՆ-ի նախաձեռնությամբ արված այս առաջարկությունը հայտնի է <<Յալթայի բանաձև>> անվամբ:

Ղրիմի խորհրդածոդովում որոշվեց 1945թ.ապրիլի 25-ին Սան-Ֆրանցիսկոյում գումարել ՄԱԿ-ի հիմնադիր վեհաժողով:²⁵ Վերջինիս մասնակիցներ կարող էին դառնալ այն բոլոր պետությունները, որոնք պատերազմ էին հայտարարել Գերմանիային և Ճապոնիային մինչև 1945թ. մարտի 1-ը: Դեռ Ղրիմի խորհրդածոդովում մեծ տեղ էր զբաղեցնում հատկապես հետպատերազմյան աշխարհի միջազգային անվտանգության պահպանման հարցը, որտեղ էլ որոշվեց խաղաղության պահպանման համար ստեղծել միջազգային կազմակերպություն. <<Մենք գտնում ենք, -ասում էին խորհրդածոդովի մասնակիցները, որ այն պետք է կանխի ռազմական ագրեսիան, ինչպես նաև վերացնի քաղաքական, տնտեսական և սոցիալական բնագավառներում պատերազմի պատճառած վնասները ու նպաստի բոլոր խաղաղասեր ժողովուրդների միջև սերտ և շարունակական համագործակցությանը>>:²⁶

1.2 ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումը և կառույցը

1945թ. ապրիլի 25-ին Սան-Ֆրանցիսկոյում տեղի ունեցավ ՄԱԿ-ի հիմնադիր վեհաժողովը, որին մասնակցելու հրավեր ստացան 50 պետություններ, որոնք ստորագրել էին ՄԱԿ-ի կանոնադրությունը և միավորվել Գերմանիայի դեմ

²⁴ Бодак А. Н., Войнич И. Е., Волчек Н. М., и друг., Всемирная история том 24, <<Истории второй мировой войны>>, М., 2002г. Стр. 411

²⁵ Ефимов Г.К., նշ. աշխ., էջ 9

²⁶ <<Тегеран-Ялта-Потсдам>>-сборник документов, Москва, 1971, стр., 187-188

պատերազմում: Դրանք էին 19 լատինոամերիկյան երկրներ և Մեծ Բրիտանիայի 5 դոմինյոնները: Եվրոպան ներկայացնում էին 12 պետություններ, այդ թվում ԽՍՀՄ-ը, Ուկրաինան և Բելոռուսը: Չեզոք և նախկին թշնամի պետությունները մասնակցության հրավեր չստացան:

Ընդհանուր առմամբ այդ պետություններն էին.

ԽՍՀՄ, ԱՄՆ, Անգլիա, Չինաստան, Ֆրանսիա, Ավստրալիա, Բելգիա, Բոլիվիա, Բրազիլիա, Կանադա, Չիլի, Կոլումբիա, Կոստա-Ռիկա, Կուբա, Չեխոսլովակիա, Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Եգիպտոս, Եթովպիա, Հունաստան, Գվատեմալա, Հաիթի, Գոնդուրաս, Հնդկաստան, Իրան, Իրաք, Լիբիա, Լյուքսեմբուրգ, Մեքսիկա, Նիդեռլանդներ, Նոր-Ջեյլանդիա, Նիկարագուա, Նորվեգիա, Պանամա, Պարագվայ, Պերու, Ֆիլիպիններ, Սալվադոր, Սաուդյան Արաբիա, Թուրքիա, Ուրուգվայ, Վենեսուելա, Հարավսլավիա, Լիբանան, Սիրիա, Հարավաֆրիկյան միություն: Արդեն կոնֆերանսի ընթացքում մասնակցության հրավեր ստացան նաև Ուկրաինան, Բելոռուսը, Արգենտինան և Դանիան:

Վեհաժողովին հրավիրված չէր Լեհաստանը, այս հարցով զբաղվող Անգլիայի և ԱՄՆ-ի կառավարությունները դեմ հանդես եկան Լեհաստանի պաշտոնական ներկայացուցիչների մասնակցությանը Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին, նրա համար, որ այդ ժամանակ Լեհաստանի կառավարությունը վերակազմված չէր Յալթայի կոնֆերանսի որոշումների հիման վրա: Անգլո-ամերիկյան այդ դիրքորոշումը ըստ էության ուղղված էր կանխելու Լեհաստանի ձևավորումը: Իսկ Լեհաստանը համարվում էր 1942թ. հունվարի 1-ի հռչակագրի առաջնային մասնակիցներից մեկը և իրավունք ուներ լինելու ՄԱԿ-ի հիմնադիրներից:

Այս մոտեցման դեմ, որը չէր բխում Լեհաստանի շահերից, հետևողական պայքար մղեց Խորհրդային միությունը և դրա շնորհիվ Լեհաստանը իրավունք

ստացավ դառնալ ՄԱԿ-ի հիմնադիր անդամներից մեկը և այդ դիրքերից ստորագրել Կանոնադրությունը՝ դառնալով հիմնադիր 51 պետություններից մեկը:

Վեհաժողովին մասնակցելու հրավերի տեքստը պետք է ուղարկվեր բոլոր պետություններին և պետք է ունենար հետևյալ բովանդակությունը.

Հրավեր

<<ԱՄՆ-ի պատվիրակությունը իր և Միացյալ Թագավորության, ԽՍՀՄ-ի, Չինաստանի այդ թվում նաև Ֆրանսիայի ժամանակավոր կառավարության անունից մասնակից երկրների կառավարությունների ներկայացուցիչներին հրավիրում է մասնակցելու Միավորված ազգերի կոնֆերանսին, որը տեղի կունենա 1945թ. ապրիլի 25-ին Սան-Ֆրանցիսկոյում (ԱՄՆ) միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանն ուղղված կազմակերպության Կանոնադրության մշակման համար>>:²⁷

Այսպես, վեհաժողովի օրակարգում դրված էր ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումը, որի դրույթները հրապարակվել էին Դումբարթոն-Օքսի կոնֆերանսում և այժմ լրացվելու էին հետևյալ կետերով.

1. Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա մեկ ձայնի իրավունք:
2. Ընթացակարգի հարցերին վերաբերող Անվտանգության խորհրդի կայացրած որոշումները ընդունվելու էին 7 անդամների ձայների մեծամասնությամբ:
3. Բոլոր այլ հարցերի վերաբերյալ Անվտանգության խորհրդի որոշումներն ընդունվելու էին 7 անդամների կողմ ձայներով, ներառյալ բոլոր մշտական անդամների համընկնող ձայները:²⁸

²⁷ Бодак А. Н., Войнич И. Е., Волчек Н. М., и друг., նշ. աշխ., էջ 413

²⁸ <<Documents of the United Nations Conference on International Organisation San Francisco. United Nations Informations Organisations>> vol. 11, N.Y., 1945. Pp.3-4

Եթե որևէ երկրի կառավարություն ցանկանար եղած առաջարկությունների մասին արտահայտել իր տեսակետները և դիտողություններ անել, ապա ԱՄՆ-ի կառավարությունը պատրաստակամ պետք է լիներ այդ կարծիքներն ու դիտողությունները փոխանցելու մասնակից մյուս երկրների կառավարություններին:

Վեհաժողովում քննարկվող հարցերից մեկը վերաբերում էր տարածաշրջանային համաձայնություններին և հաստատվեց, որ այսպիսի համաձայնագրերը պետք է համապատասխանեն ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներին ու նպատակներին: Այս առումով նախատեսվում էր, որ Անվտանգության խորհուրդը առաջին հերթին պետք է տարածաշրջանային կազմակերպությունների օգնությամբ նպաստեր և ամեն ջանք գործադրեր տեղական վեճերի խաղաղ կարգավորման համար: Երկրորդ հերթին՝ պետք է օգտագործեր այդ կազմակերպությունները հարկադիր գործողություններ իրականացնելու համար, ընդ որում տարածաշրջանային կազմակերպությունները իրավունք չունեն որևէ գործողություն իրականացնել առանց Անվտանգության խորհրդի լիազորության: Այսինքն՝ Անվտանգության խորհուրդը պետք է լիակատար կերպով տեղեկացված լիներ միջազգային խաղաղությանն ու անվտանգության պահպանմանն ուղղված տարածաշրջանային համաձայնությունների կամ տարածաշրջանային մարմինների ձեռնարկած կամ նախատեսվող գործողությունների մասին:

Հաջորդ դժվարին խնդիրներից մեկը, որը քննարկվեց Սան-Ֆրանցիսկոյի վեհաժողովում, վերաբերում էր տարածքների խնամակալությանը և գաղութային տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ապագային: Կոնֆերանսը դարձել էր երկու իրարամերժ կարծիքների բախման ասպարեզ, որոնք ներկայացնում էին Արևմտյան պետությունների տարբեր խմբավորումները: Գաղութային համակարգի պահպանման կողմնակիցներից էր Մեծ Բրիտանիան, որը ցանկանում էր պահպանել իր տարածքային ձեռքբերումները: ԱՄՆ-ը իր հերթին ցանկանում էր այս առումով

իրականացնել որոշակի փոփոխություններ: Ըստ դրանց, վերջինս ցանկանում էր ներթափանցել այն տարածքներ, որոնք գտնվում էին Ազլիայի, ֆրանսիայի և այլ պետությունների ազդեցության տակ:²⁹Այսինքն, գաղութային հարցերի շուրջ տարաձայնություններ կային մի կողմից ԱՄՆ-ի, մյուս կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների միջև:

Չնայած գաղութային պետությունների հակասություններին, որոնք ձգտում էին պահպանել նախկին կարգերը՝ ԽՍՀՄ-ը հասավ նրան, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունում մտցվեց դրույթ այն մասին, որ խնամակալության հովանավորության համակարգը պետք է նպաստի խնամարկյալ տարածքների բնակչության զարգացմանը, որը «ուղղված կլինի ինքնորոշման կամ անկախության հաստատմանը»:³⁰ԽՍՀՄ-ը առաջարկեց նաև, որ Խնամակալության խորհրդի մեջ մտնեն Անվտանգության խորհրդի բոլոր մշտական անդամները: Այսպիսով, գաղութային ժողովուրդների անկախության համար պայքարի մասին որոշումները, որոնք ընդունվեցին Սան-Ֆրանցիսկոյում դրվեցին միջազգային հիմքերի վրա, ինչը նախկինում բացակայում էր:

Քանի որ հիմնական հարցերը համաձայնեցվել էին մեծ տերությունների միջև, օրակարգում դրված միակ հարցը վերջնական ակտի կնքումն էր, այն է՝ ներկայացված նախագծերի հիման վրա հաստատել ՄԱԿ-ի Կանոնադրությունը: Եվ վերջապես 1945թ. հունիսի 26-ին վեհաժողովը ընդունեց ՄԱԿ-ի Կանոնադրությունը և ավարտեց իր աշխատանքները:

Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսը հերթականությամբ նախագահում էին չորս տերությունների պատվիրակությունների ղեկավարները (ԽՍՀՄ, Անգլիա, Չինաստան և ԱՄՆ): Վեհաժողովի պաշտոնական լեզուներն էին՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը, չինարենը և իսպաներենը:

²⁹ Claude I. L., Swords into Plowshares. The Problems and Progress of international Organization, N.Y., 1964, p.,84

³⁰ История новейшего времени стран Европы и Америки 1918-1945, под ред., Языкова Е.Ф., М., 1989, стр., 431

ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումը փաստորեն երկարատև քննարկումների արդյունք էր: Այս կոնֆերանսը պատմական և շատ առումներով շրջադարձային էր, հատկապես այն լուրջ առաջընթաց էր միջազգային հարաբերություններում կոլեկտիվ անվտանգության և համաշխարհային խաղաղության պահպանման գործում:

Պատահական չէ, որ մեր օրերում այս կամ այն միջազգային գործընթացների և պետությունների միջև կնքված համաձայնագրերի օրինականությունը, նրանց խաղաղության պահպանման համապատասխանության խնդիրը, գնահատվում է ելնելով ՄԱԿ-ի Կանոնադրության համապատասխանության տեսակետից, նրա նպատակներից և սկզբունքներից:³¹

ՄԱԿ-ի ստեղծման և Կանոնադրության ընդունման աշխատանքներին ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի ակտիվ մասնակցությունը ցույց տվեց, որ չնայած նրան, որ այս կամ այն հարցերի շուրջ երեք տերությունների ղեկավարները ունեին տարբեր կողմնորոշումներ, սակայն մի հարցում նրանք համակարծիք էին, որ հակահիտլերյան կռաւիցիայի անդամ պետությունների միությունը որոշիչ դեր ունի՝ երկրի վրա կայուն խաղաղության պահպանման գործում:

Միավորված ազգեր կազմակերպությունը պաշտոնապես հանդես եկավ 1945թ. հոկտեմբերի 24-ին, երբ երկրների մեծ մասը, այդ թվում և Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամները վավերացրեցին Կանոնադրությունը: Ահա թե ինչու է հենց հոկտեմբերի 24-ը ամեն տարի նշվում է որպես ՄԱԿ-ի օր:

ՄԱԿ-ի Կանոնադրությունը նրա հիմնարար փաստաթուղթն է, որում նշված են անդամ պետությունների այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց վրա են հիմնվում ՄԱԿ-ի գլխավոր օրգաններն ու ընթացակարգերը: Լինելով միջազգային պայմանագիր՝ Կանոնադրությունը օրինակարգում է միջազգային հարաբերությունների հիմնական սկզբունքները պետությունների ինքնիշխան

³¹ Кожевников Ф. И., Мовчан А. П., նշ. աշխ., էջ 5

հավասարությունից մինչև միջազգային հարաբերություններում ուժի կիրառման արգելքը:

Կանոնադրության նախաբանը արտահայտում է այն ժողովուրդների իդեալները և ընդհանուր նպատակները, որոնց կառավարությունները համախմբվեցին՝ ստեղծելու Միավորված ազգերի կազմակերպությունը:

Մենք՝ Միավորված ազգերի ժողովուրդներս, վճռական ենք փրկելու գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը, պետք է վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության, մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարությունն, ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, և ավելի մեծ ազատության պայմաններում խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը, և հանուն այդ նպատակների՝ ցուցաբերել հանդուրժողականություն, միավորվել՝ միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար:³²

ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն՝ կազմակերպությունը որդեգրեց հետևյալ նպատակները՝

- Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ, համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու

³² ՄԱԿ-ի Կոնոադրություն, ՄԱԿ-ի ՀՏԲ, Հայաստան 1996, էջ 3:

միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը:

- Զարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա:
- Իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի, միջազգային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և քաջալերման գործում՝ անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից:
- Դառնալ ազգերի գործողությունների համաձայնեցման կենտրոն այդ ընդհանուր նպատակներն իրագործելու ճանապարհին:³³

Կազմակերպությունը և նրա անդամները, հետամուտ լինելով այս նպատակներին, գործելու են հետևյալ սկզբունքների համաձայն.

- Կազմակերպությունը հիմնվում է իր բոլոր անդամների ինքնիշխան հավասարության սկզբունքի վրա:
- Բոլոր անդամները բարեխղճորեն պետք է կատարեն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները, որպեսզի ապահովեն իրենց բոլորի համար անդամությունից բխող իրավունքներն ու առավելությունները:
- Բոլոր անդամներն իրենց միջազգային վեճերը պետք է կարգավորեն խաղաղ միջոցներով, այնպես, որ վտանգի չենթարկվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը:
- Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական

³³ Дурденевский В. Н., Крылов С. Б., նշ. աշխ., էջ 34

անկախության նկատմամբ և կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից:

- Բոլոր անդամները համակողմանի օժանդակություն պետք է ցուցաբերեն Միավորված ազգերի կազմակերպությանը նրա նախաձեռնած բոլոր գործողություններում, որոնք համապատասխանում են սույն կանոնադրությանը և ձեռնպահ պետք է մնան օժանդակելուց որևէ պետության, որի նկատմամբ Միավորված ազգերի կազմակերպությունը կանխարգելիչ կամ հարկադրական գործողություն է ծավալում:
- Կազմակերպությունն ապահովում է, որպեսզի այն պետությունները, որոնք նրա անդամ չեն, գործեն համաձայն վերոհիշյալ սկզբունքների այնքանով, որքանով դա կարող է անհրաժեշտ լինել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար:³⁴

ՄԱԿ-ի Կանոնադրությունը կարող է ենթարկվել փոփոխությունների Գլխավոր ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդով և ՄԱԿ-ի անդամների երկու երրորդի վավերացմամբ, ներառյալ Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները: Առ այսօր փոփոխության է ենթարկվել Կանոնադրության չորս հոդված, ընդ որում դրանցից մեկը՝ երկու անգամ.

- 1965թ. Անվտանգության խորհրդի անդամների թիվը ավելացավ 11-ից հասնելով 15-ի (23-րդ հոդված) և որոշում ընդունելու համար կողմ քվեարկողների անհրաժեշտ թիվը ավելացել է 7-ից հասնելով 9-ի, ներառյալ հինգ մշտական անդամների համընկնող ձայները բոլոր այն հարցերի դեպքում, որոնք բովանդակային և ոչ ընթացակարգային բնույթ ունեն (27-րդ հոդված):

³⁴ <<Основные сведения об Организации Объединенных Наций>>,<<Международные отношения>>М., 1991, стр., 13-14

- 1968թ.-ից՝ Կանոնադրությունը վերանայելու նպատակներով համաժողով հրավիրելու համար անհրաժեշտ է Անվտանգության խորհրդի ոչ թե 7 այլ՝ 9 ձայն (109-րդ հոդված):³⁵

Միավորված ազգերի կազմակերպության սկզբնական անդամներ են հանդիսանում այն պետությունները, որոնք ստորագրել և վավերացրել են ՄԱԿ-ի Կանոնադրությունը: ՄԱԿ-ի նոր անդամներ կարող են դառնալ նաև այն երկրները, որոնք մտել են կազմակերպության մեջ՝ Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո:

Նոր անդամների ընդունման կարգի մասին հստակ սահմանում է Կանոնադրության 4-րդ հոդվածը, այն է՝ Միավորված ազգերի կազմակերպության անդամակցությունը բաց է բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք կստանան Կանոնադրությունը բովանդակող պարտավորությունները և կազմակերպության կարծիքով, կարող են և կամենում են կատարել այդ պարտականությունները:³⁶

Ցանկացած նոր պետության Միավորված ազգերի կազմակերպություն ընդունվելն իրականացվում է Գլխավոր ասամբլեայի որոշմամբ՝ Անվտանգության խորհրդի հանձնարարականով: Այսինքն, Գլխավոր ասամբլեայի որևէ որոշում, կապված ՄԱԿ-ի կազմում նոր պետության անդամակցության հետ, չի կարող ընդունվել առանց Անվտանգության խորհրդի համաձայնության:³⁷

Միավորված կազմակերպության այն անդամը, որը պարբերաբար խախտում է նրա Կանոնադրությունը, կարող է Անվտանգության խորհրդի հանձնարարականով վտարվել կազմակերպությունից՝ Գլխավոր ասամբլեայի կողմից: Սակայն նման դեպք մինչ օրս չի գրանցվել: Մյուս կողմից ՄԱԿ-ի Կանոնադրությունը չի նախատեսում հատուկ բանաձև կամավոր կազմակերպությունից դուրս գալու մասին: Այդպիսի

³⁵ <<Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին>>, Երևան 2002, էջ 5-6:

³⁶ Charter of the United Nations, Chapter II, article 4

³⁷ <<О порядке голосования в Генеральной Ассамблее и в Совете Безопасности>>, М., 1965 стр., 21-22, 31-32

իրավունք անկասկած ունի ՄԱԿ-ի յուրաքանչյուր անդամ: Կանոնադրության համաձայն՝ ՄԱԿ-ի պաշտոնական և աշխատանքային լեզուներն են չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը: Արաբերենն ավելացել է որպես Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի և Տնտեսական ու սոցիալական խորհրդի պաշտոնական լեզու:

Գլխավոր ասամբլեան Լոնդոնում, 1946թ.՝ առաջին հավաքի ժամանակ, որոշեց ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակը տեղակայել ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում: 1949թ. հոկտեմբերի 24-ին Գլխավոր քարտուղար Տրիգվե Լին տեղադրեց 39 հարկանի կառույցի հիմնաքարը: ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակը միջազգային գոտի է: Սա նշանակում է, որ տարածքը, որտեղ գտնվում է ՄԱԿ-ը, պատկանում է ոչ միայն ԱՄՆ-ին՝ որպես հյուրընկալող երկիր, այլև ՄԱԿ-ի բոլոր անդամներին:³⁸

Այսպիսով, ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, որպես համընդհանուր միջազգային միջկառավարական կազմակերպություն, որը կոչված էր աշխարհի պետություններին օգնել է գտնել հակասությունների ու վեճերի խաղաղ կարգավորման ուղիները: ՄԱԿ-ի գործունեության հիմքը Կանոնադրությունն է. միջազգային փաստաթուղթ, որով անդամ պետությունները, մասնավորապես, պարտավորվում են ձեռնարկել համատեղ միջոցներ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանն ու քարոզմանը:³⁹

³⁸ www.un.org/tours/

³⁹ www.un.org/rights/

Գլուխ Երկրորդ

ՄԱԿ-ի գործառույթները: Դերակատարումը միջազգային խաղաղության

պահպանման եվ ամրապնդման գործում:

2.1 ՄԱԿ-ի գլխավոր մարմինների ձևավորումը. հիմնական գործառույթները

Միավորված ազգերի կազմակերպությունը ունի վեց հիմնական մարմին: Դրանցից հինգը՝ Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը և Քարտուղարությունը, գտնվում են Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում: Վեցերորդ մարմինը՝ Արդարադատության միջազգային դատարանը, գտնվում է Հաագայում (Նիդեռլանդներ): ՄԱԿ-ի եվրոպական բաժանմունքը տեղակայված է Ժնևում:

Գլխավոր ասամբլեան համարվում է ՄԱԿ-ի լիակազմ մարմինը, այսինքն բաղկացած է ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններից, որոնցից յուրաքանչյուրը Գլխավոր ասամբլեայում ունի հինգից ոչ ավելի ներկայացուցիչ: Այն հանդիսանում է ՄԱԿ-ի հիմնական խորհրդակցական և վերահսկող օրգանը: Գլխավոր ասամբլեան իրենից ներկայացնում է ազգերի խորհրդարան, որի մասնակիցները օժտված են հավասար իրավունքներով: Իր նիստերում Գլխավոր ասամբլեան քննարկում է աշխարհի ամենահրատապ խնդիրները: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ երկիր՝ հարուստ թե աղքատ, մեծ թե փոքր, ունի մեկ ձայն:⁴⁰

Գլխավոր ասամբլեան կարող է քննարկել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման գործում համագործակցության հիմնական սկզբունքները, ներառյալ զինաթափումը և սպառազինությունների կարգավորումը պայմանավորող սկզբունքները, և կարող է այդ սկզբունքների առնչությամբ հանձնարարականներ ներկայացնել անդամներին կամ Անվտանգության խորհրդին և կամ երկուսին միաժամանակ: Գլխավոր ասամբլեան կարող է Անվտանգության խորհրդի

⁴⁰ Ефимов Г. К., Генеральная Ассамблея ООН, М., 1969, стр., 15

ուշադրությունը հրավիրել այն իրավիճակների վրա, որոնք կարող են սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը:⁴¹

Գլխավոր ասամբլեան ուսումնասիրություններ է կազմակերպում և հանձնարարականներ ներկայացնում հետևյալ նպատակներով.

- Աջակցություն միջազգային համագործակցությանը քաղաքականության բնագավառում և միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման ու դրա կողմիֆիկացիայի⁴² խրախուսում,
- Աջակցություն միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահության ասպարեզներում, օժանդակություն բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացմանը՝ առանց ցեղային, սեռային, լեզվի և դավանանքի տարբերակման:

Գլխավոր ասամբլեան չի կարող որևէ երկրի պարտադրել իր կամքը, նրա ընդունած որոշումները սոսկ առաջարկություններ են անդամ պետությունների համար: Սակայն այդ առաջարկությունները մեծ կշիռ ունեն, քանի որ Գլխավոր ասամբլեան ներկայացնում է աշխարհի գրեթե բոլոր երկրների ձայնն ու հասարակական կարծիքը:⁴³

Գլխավոր ասամբլեան աշխատում է նստաշրջանային կարգով: Գլխավոր ասամբլեայի նիստերը գումարվում են կանոնավոր կերպով, տարեկան մեկ անգամ՝ սեպտեմբերից մինչև դեկտեմբեր: Յուրաքանչյուր նստաշրջանից առաջ Գլխավոր ասամբլեան ընտրում է նոր նախագահին, փոխնախագահներին և վեց գլխավոր կոմիտեների (հանձնաժողովների) նախագահներին:

⁴¹ Фельдман Д. И., Яновский М. В., Генеральная Ассамблея ООН, Издательство Казанского университета 1968, стр., 32

⁴² Կողմիֆիկացիա-իրավունքի տարբեր բնագավառների օրենքների միավորումը՝ մեկ միասնական ամբողջականության՝ կողոպտի վերածումը:

⁴³ <<ՄԱԿ-ի մոդել>>, Երևան 2005թ., էջ 6:

Հարկ է նշել, որ անհրաժեշտության դեպքում նստաշրջանը կարող է ավելի երկար տևել, կարող են անգամ խախտվել հարցերի հերթականությունը, իսկ արտակարգ իրավիճակների կապակցությամբ կարող է գումարվել հատուկ կամ արտհերթ նիստ՝ Անվտանգության խորհրդի, անդամ երկրների մեծամասնության կամ մեկ անդամի խնդրանքով, եթե անդամների մեծամասնությունը կողմ է: Արտակարգ հատուկ նստաշրջանները կարող են հրավիրվել 24 ժամվա ընթացքում՝ Անվտանգության խորհրդի պահանջով, նրա ցանկացած ինը անդամների ձայներով, անդամ պետությունների մեծամասնությամբ կամ մեկ պետության խնդրանքով, եթե անդամների մեծամասնությունը կողմ է:

Ըստ ՄԱԿ-ի կանոնակարգի Գլխավոր ասամբլեան ունի նաև հետևյալ գործառույթներն ու լիազորությունները.

- Հանձնարարել տարբեր իրավիճակներում խաղաղ լուծումներ, որոնք կարող են հանգեցնել բոլոր ազգությունների միջև բարեկամական հարաբերությունների խախտման:
- Ստանալ և վերանայել Անվտանգության խորհրդի, ինչպես նաև ՄԱԿ-ի մյուս կազմակերպությունների զեկույցները:
- Որոշել, թե յուրաքանչյուր անդամ երկիր որքան պետք է վճարի ՄԱԿ-ի գործունեության համար, և ինչպես պետք է ծախսվի այդ գումարը:
- Քննարկել կայուն զարգացման և մարդու իրավունքների հարցերը:
- Ընտրել Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներին, Տնտեսական և սոցիալական խորհրդի ընտրվող անդամներին, Անվտանգության խորհրդի անդամների հետ համատեղ ընտրել Արդարադատության միջազգային դատարանի դատավորներին և Անվտանգության խորհրդի առաջարկությամբ նշանակել գլխավոր քարտուղարին:

Նիստերի ժամանակաշրջանից դուրս ասամբլեայի աշխատանքներն իրականացվում են վեց հիմնական հանձնաժողովների և ՄԱԿ-ի Քարտուղարության կողմից: Գլխավոր ասամբլեայի հանձնաժողովներն են.

- Առաջին կոմիտե (գլխաթափման և միջազգային անվտանգության հարցերով)
- Երկրորդ կոմիտե (տնտեսական և ֆինանսական հարցերով)
- Երրորդ կոմիտե (սոցիալական, մարդասիրական և մշակութային հարցերով)
- Չորրորդ կոմիտե (հատուկ քաղաքական և մշակութային հարցերով)
- Հինգերորդ կոմիտե (վարչական և բյուջետային հարցերով)
- Վեցերորդ կոմիտե (իրավական հարցերով)

ՄԱԿ-ի տարեկան աշխատանքը մեծապես կախված է Գլխավոր ասամբլեայի որոշումներից՝ անդամների մեծամասնության՝ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձևերում արտահայտված կամքից:

Այդ աշխատանքն իրականացնում են.

- Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեներն ու այլ մարմիններ, որոնց նպատակն է ուսումնասիրել որոշակի հարցեր (գլխաթափում, խաղաղապահ գործողություններ, զարգացում և մարդու իրավունքները) և զեկույցներ ներկայացնել:
- Ասամբլեայի կողմից հրավիրվող միջազգային համաժողովները և
- ՄԱԿ-ի քարտուղարությունը՝ Գլխավոր քարտուղարը և միջազգային քաղաքացիական ծառայողները բաղկացած նրա աշխատակազմը:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում ամենահրատապ հարցը, որի լուծումից է կախված ամբողջ մարդկության ճակատագիրը, համարվում է աշխարհի խաղաղության պահպանման ու ամրապնդման հարցը: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ Անվտանգության խորհուրդը հիմնականում պատասխանատու է աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանման համար: Խաղաղությանը սպառնացող վտանգի դեպքում խորհուրդը կարող է նիստ հրավիրել ցանկացած պահի:

Անվտանգության խորհուրդը ՄԱԿ-ի անբաժանելի մասն է, համարվում է վերջինիս համակարգի կենտրոնական կառուցվածքային տարրը: Անվտանգության խորհուրդի գործունեությունը արտահայտում է ՄԱԿ-ի ստեղծման հիմնական իմաստը, այն է՝ «Փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքներից»:⁴⁴

Անվտանգության խորհուրդը բաղկացած է ՄԱԿ-ի տասնհինգ անդամ երկրներից: Դրանցից հինգը՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Մեծ Բրիտանիայի և Հյուս.Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, ԱՄՆ-ը մշտական անդամներն են: Մնացած տասն ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից՝ երկու տարի ժամկետով, իհարկե հաշվի առնելով տվյալ երկրի ունեցած մասնակցությունը միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման և կազմակերպության այլ նպատակներին հասնելու գործում:

Վերջին տարիներին անդամ երկրները քննարկում են խորհրդի կազմում փոփոխություններ իրականացնելու հնարավորությունները, հատկապես ՄԱԿ-ի օրակարգում ցանկանում են դնել Անվտանգության խորհրդի ընդլայնման հարցը:

Անվտանգության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ներկայացուցիչ և մեկ ձայնի իրավունք: Խորհուրդում որոշումները կայացնելիս անհրաժեշտ է 9 կողմ ձայների առկայություն: Սա արդեն հայտնի «Մեծ տերությունների միաձայնության» կանոնն է, այլ կերպ ասած վետոյի իրավունքը: Եթե մշտական անդամներից որևէ մեկը դեմ քվեարկի այսինքն՝ որոշման վրա «վետո» դնի, որոշումը չի ընդունվի: Բոլոր մշտական անդամները տարբեր առիթներով օգտագործում են վետոյի իրավունքը: Բացառություն են կազմում ընթացակարգային հարցերի վերաբերյալ քվեարկությունները: Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության՝ Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերն ու որոշումները պարտադիր են բոլոր անդամ երկրների համար: Մինչ ՄԱԿ-ի մյուս մարմինները միայն առաջարկներ են ներկայացնում

⁴⁴ Федоров В. Н., նշ. աշխ., էջ 3

կառավարություններին, Անվտանգության խորհուրդը միակն է, որ իրավասու է որոշումներ ընդունել, որոնց անդամ պետությունները պարտավոր են ենթարկվել:

Անվտանգության խորհուրդը լիազորված է քննելու ցանկացած վեճ կամ այնպիսի իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային ընդհարումների՝ պարզելու համար, թե կարող է արդյոք, այդ վեճի կամ իրավիճակի շարունակվելը սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Այդպիսի վեճի կամ իրավիճակի ցանկացած փուլում Անվտանգության խորհուրդը կարող է հանձնարարել կարգավորման պատշաճ ընթացակարգ կամ մեթոդներ: Օրինակ, եթե նիստի օրակարգում հարց է դառնում միջազգային խաղաղությանը սպառնացող վտանգը, խորհուրդը նախ և առաջ փորձում է հակասությունները հարթել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների, հարցադրումների, հաշտեցման, դատավարությունների միջոցով և այլն: Անվտանգության խորհուրդը այսկերպ առաջարկում է իրավիճակի լուծման ուղիներ, հանդես է գալիս որպես միջնորդ: Զինված պայքարի դեպքում խորհուրդը փորձում է հրադադար ապահովել: Հանդես գալով խաղաղարար առաքելությամբ՝ խորհուրդը կարող է նպաստել կողմերի միջև զինադադարի պահպանմանն ու կանխել հակամարտող ուժերի բախումը:

Այսպես, Անվտանգության խորհուրդը հետաքննում է յուրաքանչյուր բանավեճ կամ իրադրություն, որը կարող է հանգեցնել միջազգային հակամարտության, և ըստ այդմ հանձնարարում է բանավեճի կարգավորման մեթոդներ և համապատասխան միջոցառումներ:

Խուրհուրդը կարող է նաև միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու ընդունված որոշումների կենսագործումը, սահմանել տնտեսական պատժամիջոցներ կամ արգելել զենքի առևտուրը: Այսինքն, այդ միջոցները կարող են ներառել տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային

հաղորդակցությունների լրիվ կամ մասնակի ընդհատում, ինչպես նաև դիվանագիտական հարաբերությունների խզում:⁴⁵

Եթե Անվտանգության խորհուրդը գտնի, որ այդ միջոցները ևս անբավարար են, իրավասու է ձեռնարկել օդային, ծովային կամ ցամաքային զիված ուժերի այնպիսի գործողություններ, որոնք կարող են խթանել միջազգային խաղաղության ու անվտանգության վերականգնմանն ուղղված գործողությունները կամ քայլերը : ՄԱԿ-ի անդամները պարտավոր են Անվտանգության խորհուրդին տրամադրել խաղաղության ապահովման համար անհրաժեշտ զինված ուժեր:

Անվտանգության խորհուրդը տարբերվում է ՄԱԿ-ի մյուս գլխավոր անդամներից ոչ միայն Կանոնադրությամբ սահմանված իր գործառույթներով, այլև իր գործողությունների և լիազորությունների մասշտաբով: Անվտանգության խորհրդի գործողություններն այնքան լայնամասշտաբ են, որ դա առիթ է տվել ամերիկացի իրավաբան Հանս Զելզենին հայտարարելու հետևյալը. «Անվտանգության խորհրդի լիազորությունները գրեթե համընկնում են ամբողջ ՄԱԿ-ի հնարավորությունների և լիազորությունների հետ»:⁴⁶

Անդրադառնալով Անվտանգության խորհրդին, տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բնորոշում նրա տեղն ու դերը ՄԱԿ-ի կառույցում: Օրինակ Արևմուտքում հայտնի ՄԱԿ-ի Կանոնադրության մեկնաբաններ Լ. Գուդրիչը և Է. Խամբոն գտնում են, որ Անվտանգության խորհուրդը հանդիսանում է ՄԱԿ-ի գլխավոր գործադիր մարմինը:⁴⁷

Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ռ. Մաքիվերը ենթադրում է, որ Անվտանգության խորհուրդը ավելին է, քան գործադիր մարմին, քանզի այն համարվում է վճռորոշ մարմին, որը որոշում է, թե ինչպիսի միջոցառումներ պետք է

⁴⁵ Charter of the United Nations, Chapter VII, article 41

⁴⁶ Kelsen H., The Law of the United Nations, A Critical Analysis of its Fundamental Problems., N. Y., 1950, P., 249

⁴⁷ Goodrich L. M., Hambo E., the Charter of the United Nations, Commentary and Documents, p., 28

իրականացվեն միջազգային խաղաղության պահպանման համար, այդ թվում ընդգծում է նաև այդ միջոցառումների կատարման մեթոդներ և ձևերը:⁴⁸

Ընդհանրացնելով, պետք է նշել, որ համաձայն Կանոնադրության Անվտանգության խորհրդի գործառույթներն ու լիազորություններն են.

- Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը՝ համաձայն ՄԱԿ-ի սկզբունքների և նպատակների
- Քննության առնել ցանկացած բանավեճ կամ իրադրություն, որը կարող է հանգեցնել միջազգային բախման
- Առաջարկել նման բանավեճերը կարգավորելու մեթոդները
- Մշակել սպառազինությունները կարգավորելու համակարգի նախագիծ
- Որոշել խաղաղության համար սպառնալիքի կամ ագրեսիայի գոյությունը և առաջարկել ձեռնարկվելիք գործողությունները
- Կոչ անել անդամ պետություններին կիրառել տնտեսական պատժամիջոցներ՝ ագրեսիան կանխելու կամ դադարեցնելու համար
- Ուժ կիրառել ագրեսիայի դեմ
- Առաջարկել ՄԱԿ-ի նոր անդամներ
- Գլխավոր ասամբլեայի հաստատմանը ներկայացնել Գլխավոր քարտուղարի թեկնածությունը և գլխավոր ասամբլեայի հետ միասին ընտրել Արդարադատության միջազգային դատարանի դատավորներին:

Անվտանգության խորհուրդը Գլխավոր ասամբլեային ներկայացնում է նաև ամենամյա զեկույցներ և ըստ անհրաժեշտության՝ հատուկ զեկույցներ:

Տնտեսական ու սոցիալական խորհուրդը բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընտրված հիսունչորս անդամներից՝ երեք տարի ժամկետով: Տնտեսական և սոցիալական խորհրդի

⁴⁸ Maciver R., The Natins and United Nations, N. Y., 1959, p.,74

յուրաքանչյուր անդամ ունի մեկ ներկայացուցիչ: Խորհուրդը լիազորված է Գլխավոր ասամբլեայի կողմից և համակարգում է Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական ոլորտի աշխատանքները:

Հանդիսանալով միջազգային տնտեսական և սոցիալական հարցերով զբաղվող, ինչպես նաև քաղաքականության ձևավորման հանձնարարականներ մշակող գլխավոր համաժողով՝ խորհուրդը կարևորագույն դեր է խաղում կայուն զարգացման պայմաններում միջազգային համագործակցության խթանման գործում:⁴⁹ Խորհուրդը նաև խորհրդատվական երկխոսություններ է իրականացնում հասարակական կազմակերպությունների հետ՝ կենսական կապ ապահովելով Միավորված ազգերի կազմակերպության և քաղաքացիական հասարակության միջև: Այսինքն նրան միջոցով հասարակությանը տեղյակ է պահում ՄԱԿ-ի այն ծրագրերի մասին, որոնք կապված են տնտեսական և սոցիալական զարգացման հետ:

Տնտեսական և սոցիալական խորհուրդը տարին մեկ անգամ նստաշրջաններ է գումարում՝ մեկ ամիս տևողությամբ: Նիստերը հաջորդաբար անցկացվում են Նյու Յորքում և Ժնևում: Նախագահների հատուկ նիստում քննարկվում են կարևոր տնտեսական և սոցիալական հարցեր: Սկսած 1998 թվականից՝ խորհուրդն ընդլայնել է իր քննարկումների ոլորտը՝ ընդգրկելով նաև հումանիտար բնույթի հարցեր՝ խթանելով մարդու իրավունքների և հիմարար ազատությունների նկատմամբ հարգանքը և այլն:

ՄԱԿ-ի Կանոնադրությունը միջազգային տնտեսական և սոցիալական համագործակցությունն իրականացնելու գործը վստահեց երկու գլխավոր մարմինների՝ Գլխավոր ասամբլեային և Տնտեսական ու սոցիալական խորհրդին: Գլխավոր ասամբլեան որպես կանոն որոշում է համագործակցության ընդհանուր սկզբունքները: Իսկ Տնտեսական և սոցիալական խորհուրդը լուծում է այդ ոլորտի

⁴⁹ Бобров Р. Л., Малинин С. А., նշ. աշխ., էջ 34-36

կոնկրետ խնդիրները: Այսպես, Գլխավոր ասամբլեան կարող է հանձնարարականներ տալ խորհրդին իրականացնելու համար որոշակի աշխատանքներ (զարգացման ծրագրեր, համաժողովների հրավիրում՝ որոշակի հարցեր ուսումնասիրելու համար և այլն): Այլ կերպ ասած տնտեսական և սոցիալական համագործակցության ոլորտում ՄԱԿ-ի բարձրագույն մարմինը համարվում է ոչ թե Տնտեսական և սոցիալական խորհուրդը, այլ՝ Գլխավոր ասամբլեան:

Խորհրդի տարեկան աշխատանքներն իրականացվում են հանձնաժողովների կողմից, որոնք կանոնավոր հանդիպումներ են ունենում և հաշվետու են խորհրդի առաջ:

Խորհուրդը իր գործառույթներն իրականացնելու համար համագործակցում է նաև ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություններ հետ, ինչ-որ չափով նաև համակարգելով դրանց գործունեությունը: Խորհուրդը կարող է համապատասխան միջոցառումներ ձեռնարկել ոչ կառավարական այն կազմակերպությունների հետ, որոնք շահագրգռված են խորհրդատվություն անցկացնել իրենց իրավասության հետ կապված հարցերը լուծելու համար:

Ավելի քան 1600 ոչ կառավարական կազմակերպություններ Տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակ ունեն: Խորհուրդը գտնում է, որ նրանք պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց տեսակետները, քանի որ հատուկ փորձառություն և տեխնիկական գիտելիքներ ունեն, որոնք կարևոր են խորհրդի գուծունեության համար:

Խորհուրդը ոչ կառավարական կազմակերպությունները դասակարգում է երեք խմբի.

- Առաջին խմբի կազմակերպությունները զբաղվում են խորհրդի գործունեության բնագավառների մեծ մասին առնչվող հարցերով

- Երկրորդ խմբի կազմակերպությունները հատուկ փորձառություն ունեն հատուկ բնագավառներում
- Երրորդ խմբի կազմակերպությունները գրանցվում են ցանկում՝ անհրաժեշտության դեպքում նրանց հետ խորհրդակցելու համար:

Այսպիսով, տնտեսական և սոցիալական խորհուրդը լիազորված է ուսումնասիրություններ կատարելու կամ զեկուցագրեր պատրաստելու միջազգային տնտեսական, մշակութային, կրթական, առողջապահական և համանման հարցերի վերաբերյալ կամ շահագրգռել այդ հարցերով ուրիշներին, ինչպես նաև ցանկացած այդպիսի հարցերով հանձնարարականներ ներկայացնել Գլխավոր ասամբլեային, ՄԱԿ-ի անդամներին և շահագրգիռ մասնագիտացված գործակալություններին:⁵⁰

Միավորված ազգերի կազմակերպությունը իր ղեկավարության ներքո Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծեց խնամակալության միջազգային համակարգ՝ այն տարածքների կառավարման ու վերահսկման համար, որոնք կներգրավվեն իր մեջ հետագա անհատական համաձայնություններով: Այդ տարածքները կոչվում են խնամարկյալ տարածքներ: Խնամակալության համակարգը ի սկզբանե վերաբերում էր հետևյալ տարածքներին.

- մանդատի ներքո գտնվող տարածքներ
- տարածքներ, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով օտարվել են թշնամի պետությունների կողմից
- տարածքներ, որոնց կառավարման պատասխանատվությունը ստանձնած պետությունները կամավոր հանձնել են համակարգին:

Փաստորեն, խորհրդի ստեղծման նպատակն էր համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ապահովելու տվյալ տարածքներում ինքնորոշման կամ անկախության հասնելու գործընթացը: Մինչև 1994թ. բոլոր ենթակա տարածքները ինքնորոշվեցին

⁵⁰ Charter of the United Nations, Chapter X, article 62.1

կամ ձեռք բերեցին անկախություն՝ որպես առանձին պետություններ կամ միանալով հարևան անկախ երկրներին: Վերջին խնամակալվող տարածքը խաղաղօվկիանոսյան կղզախմբերից մեկն էր (Պալաուն), որի վարչական կառավարումն իրականացվում էր Միացյալ Նահագների կողմից: Նա դարձավ ՄԱԿ-ի 185-րդ անդամ երկիրը: Խորհրդի գործունեության արդյունքում 70-ից ավելի գաղութներ և կախյալ տարածքներ ինքնորոշվելով ձեռք բերեցին անկախություն:

Խնամակալության խորհուրդը մշակում է խնամարկյալ յուրաքանչյուր տարածքի բնակիչների քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթական առաջընթացի վերաբերյալ հարցաթերթիկ, իսկ Գլխավոր ասամբլեայի իրավասության տակ գտնվող յուրաքանչյուր խնամարկյալ տարածքի վարչական իշխանությունը այդ հարցաթերթիկի հիման վրա ամենամյա զեկուցագրեր է ներկայացնում Գլխավոր ասամբլեային:

Խնամակալության խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Խնամակալության խորհրդի որոշումներն ընդունվում են ներկա և քվեարկող անդամների մեծամասնությամբ:

Արդարադատության միջազգային դատարանը, ստեղծվել է 1946թ.: Այն այլ կերպ կոչվում է Համաշխարհային դատարան: Միջազգային դատարանը հանդիսանում է ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինը և գործում է ՄԱԿ-ի Կանոնադրության հիման վրա: Դատարանը գտնվում է Հաագայում(Նիդեռլանդներ):

Փաստորեն, ՄԱԿ-ի Կանոնադրությունը բացի վեճերն ու իրավիճակները դիվանագիտական և քաղաքական մեթոդներով լուծելուց, որոշեց ստեղծել այնպիսի իրավական կառույց, ինչպիսին է Միջազգային դատարանը:

Դատարանը կազմված է 15 դատավորներից, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից, ընդ որում, դատավորները պետք է օժտված լինեն բարոյական բարձր հատկանիշներով, պետք է լինեն միջազգային

իրավունքի բնագավառում ճանաչված և հեղինակություն վայելող իրավաբաններ: Դատարանի անդամները գործում են որպես անհատներ և իրենց պետության ներկայացուցիչներ չեն հանդիսանում: Դատարանի կազմում չեն կարող լինել միևնույն պետության երկու քաղաքացիներ: Իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելիս դատարանի անդամներն օժտված են ֆունկցիոնալ արտոնություններով և անձեռնմխելիություններով, որոնք համահունչ են դիվանագիտական արտոնություններին և անձեռնմխելիություններին: Դատավորների լիազորությունների ժամկետը ինը տարի է, ընդ որում յուրաքանչյուր երեք տարին մեկ վերընտրվում է հինգ դատավոր: Զբաղեցնելով դատավորի պաշտոնը, նրանք իրավունք չունեն զբաղվել այլ գործունեությամբ:⁵¹

Անվտանգության միջազգային դատարանը կոչված է լուծելու երկրների միջև ծագած տարաձայնությունները: Երկրների մասնակցությունը դատավարությանը կամավոր է, սակայն մասնակցության դեպքում տվյալ երկիրը պարտավոր է ենթարկվել դատարանի կայացրած վճռին: Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Գլխավոր ասամբլեային և Անվտանգության խորհրդին: Բացի վերջիններից դատարանը իրավասու է նաև ցանկացած իրավական հարցով խորհրդակցական եզրակացություն տալ այն մարմիններին, գործակալություններին կամ կազմակերպություններին, որոնք լիազորված են Գլխավոր ասամբլեայի կողմից: Դատարանը խորհրդակցական եզրակացությունները կայացնում է բաց նիստում:

Յուրաքանչյուր կողմ դատարանում հանդես է գալիս իր ներկայացուցչի միջոցով, կարող է օգտվել նաև փաստաբանների օգնությունից ու խորհրդատվությունից: Դատավարությունը դատարանում բաղկացած է երկու փուլից՝ գրավոր և բանավոր: Գրավոր դատավարությունը դատարանին և կողմերին

⁵¹ <<Основные сведения об ООН>>, Москва, 1991 стр., 25

պահանջներ ու առարկություններ հայտնելը, այլ փաստաթղթեր ներկայացնելն է և, որպես կանոն, տևում է մի քանի ամիս: Բանավոր փուլի ընթացքում դատարանը լսում է վկաներին, փորձագետներին, կողմերի ներկայացուցիչներին, փաստաբաններին և դատավարության այլ մասնակիցներին: Դատարանում գործի քննությունը իրականացվում է հրապարակայնորեն, եթե կողմերը չեն միջնորդում նիստերը փակ անցկացնելու մասին: Կողմերի ելույթներին ու գործի նյութերին ծանոթանալուց հետո դատարանը հեռանում է խորհրդակցության, որն անցնում է փակ նիստով:

Բոլոր հարցերը դատարանի կողմից լուծվում են ներկաների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահողի ձայնը վճռորոշ է: Դատական նիստի արդյունքներով կայացվում է վճիռ: Վճռում նշվում են դատավորների անունները, այն դատողությունները, որոնց վրա այն հիմնված է: Վճիռն ստորագրում են դատարանի նախագահն ու քարտուղարը: Այն հայտարարվում է բաց նիստում: Ընդ որում դատավորներն ունեն հատուկ կարծիքի իրավունք, որը ներկայացվում է գրավոր տեսքով և կցվում վճռին:

Հարկ է նշել, որ Միջազգային դատարանի դատավճիռները վերջնական են և չեն կարող բողոքարկվել: Եթե ներգրավված երկրներից որևէ մեկը չի համաձայնում որոշմանը, մյուս կողմը կարող է գործը տանել Անվտանգության խորհուրդ, որը անհրաժեշտության դեպքում կարող է հանձնարարականներ տալ կամ որոշել այն միջոցառումները, որոնց հարկավոր է դիմել դատարանի վճիռն ի կատար ածելու համար:

Քարտուղարությունը բաղկացած է Գլխավոր քարտուղարից և ՄԱԿ-ի համար անհրաժեշտ այլ աշխատակազմից: Գլխավոր քարտուղարը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի հանձնարարականով: Նա հանդիսանում է ՄԱԿ-ի գլխավոր վարչական պաշտոնյան:

Քարտուղարությունը կազմված է Նյու Յորքում և աշխարհի տարբեր երկրներում տեղակայված գրասենյակներում աշխատող միջազգային անձնակազմից, և իրականացնում է Միավորված ազգերի կազմակերպության ամենօրյա աշխատանքը: Նրա պարտականությունները նույնքան բազմաբնույթ են, որքան այն խնդիրները, որոնց առնչվում է ՄԱԿ-ը. սկսած խաղաղարար գործողությունների կառավարումից մինչև միջազգային բանավեճերում միջնորդի դերը կամ սոցիալական և տնտեսական զարգացման միտումների ուսումնասիրումը: Քարտուղարության պարտականություններից է ՄԱԿ-ի մյուս մարմիններին ծառայելը և դրանց առաջարկված ծրագրերի ու ռազմավարության ղեկավարումը:

Այսպես, Քարտուղարությունը պատասխանատու է ՄԱԿ-ի հիմնական և վարչական աշխատանքների իրականացման, բնականոն գործունեության ապահովման և սպասարկման, ՄԱԿ-ի ծրագրերի և քաղաքականության իրականացման համար: Գործում են բազմաթիվ գործակալություններ և տարածաշրջանային գրասենյակներ: Պատասխանատու գրասենյակներն են ՄԱԿ-ի կենտրոնական՝ Նյու Յորքի գրասենյակը, ինչպես նաև ՄԱԿ-ի Ժնևի (Շվեյցարիա), Վիեննայի (Ավստրիա) և Նայրոբիի (Քենիա) գրասենյակները:

Գործառույթները.

- Հավաքել և մշակել տեղեկություններ տարբեր խնդիրների վերաբերյալ, որպեսզի կառավարությունների պատվիրակները կարողանան ուսումնասիրել փաստերը և դրանց առիթով առաջարկություններ ներկայացնեն:
- Օգնել ՄԱԿ-ի որոշումների իրագործմանը, այսինքն ապահովել ՄԱԿ-ի մարմինների աշխատանքը:
- Կազմակերպել միջազգային համաժողովներ:
- Հրապարակել ու տարածել ՄԱԿ-ի նյութերը, պահպանել արխիվները, գրանցել ու հրապարակել ՄԱԿ-ի անդամ պետությունների միջազգային պայմանագրերը:

- Ելույթները ու փաստաթղթերը թարգմանել ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներով:⁵²

Գլխավոր քարտուղարը իր գործունեության համար պատասխանատու է միայն ՄԱԿ-ին, և երդում է տալիս ոչ մի պետությունից կամ իշխանությունից ցուցումներ չհայցել և չստանալ: Համաձայն Կանոնադրության անդամ պետությունները համաձայնում են հարգել Գլխավոր քարտուղարի և անձնակազմի պատասխանատվության բացառապես միջազգային բնույթը և զերծ մնալ նրանց վրա ազդեցություն գործելու փորձից: Գլխավոր քարտուղարին աջակցում է միջազգային քաղաքացիական ծառայողների աշխատակազմը: Ի տարբերություն դիվանագետների, որոնք որոշակի երկիր են ներկայացնում, քաղաքացիական ծառայողներն աշխատում են բոլոր 193 անդամ երկրների համար և հրամաններ են ստանում ոչ թե կառավարություններից, այլ՝ Գլխավոր քարտուղարից:

Գլխավոր քարտուղարը նշանակվում է հինգ տարի ժամկետով: Լինելով հավասարապես դիվանագետ, փաստաբան, քաղաքացիական ծառայող և բարձրաստիճան ղեկավար՝ Գլխավոր քարտուղարը ՄԱԿ-ի գաղափարների խորհրդանիշն է և աշխարհի ժողովուրդների, մասնավորապես աղքատների և առավել խոցելիների շահերի ջերմեռանդ պաշտպանն ու ներկայացուցիչը:

Գլխավոր քարտուղարը իրավասու է Անվտանգության խորհրդի ուշադրությանը ներկայացնել ցանկացած հարց, որը իր կարծիքով կարող է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Նա է իրականացնում քարտուղարության ստորաբաժանումների ընդհանուր ղեկավարությունը, Գլխավոր ասամբլեային ներկայացնում ՄԱԿ-ի գործունեության մասին զեկույցը, մասնակցում միջազգային կոնֆերանսների աշխատանքներին, նշանակում քարտուղարության աշխատակազմը (Գլխավոր ասամբլեայի հաստատած կանոնների համաձայն) և ղեկավարում նրա աշխատանքը: Աշխատակազմին աշխատանքի ընդունելիս և ծառայության

⁵² Медведев А. М., Секретариат ООН и требования современности, М., 1962, стр., 7

պայմանները սահմանելիս հարկ է գերազանցապես առաջնորդվել աշխատունակության բարձր մակարդակ, բանիմացություն և բարեխղճություն ապահովելու անհրաժեշտությամբ: Պետք է նաև ուշադրություն դարձնել, որ աշխատակազմը հնարավորինս լայն աշխարհագրական ընդգրկում ունենա: Այսինքն աշխատակազմի ներկայացուցիչները լինեն աշխարհի տարբեր երկրներից:

Գլխավոր քարտուղարը չի կարող գործել առանց անդամ պետությունների մտահոգությունները լրջորեն հաշվի առնելու, բայց նա պարտավոր է նաև պաշտպանել ՄԱԿ-ի արժեքները և բարոյական հեղինակությունը, գործելու և խոսելու հանուն խաղաղության՝ երբեմն նույնիսկ առարկելով անդամ պետություններին կամ անտեսելով նրանց կարծիքը:

Գլխավոր քարտուղարի դերի կարևորագույն բաղադրիչներից մեկը իր <<Բարի ծառայությունների>> կիրառումն է, հրապարակային կամ մասնավոր կերպով ձեռնարկվող քայլեր, որոնց նշանակությունը բխում է նրա անկախությունից, անկողմնակալությունից և ազնվությունից: Այդ գործողությունների նպատակն է կանխել միջազգային բանավեճերի ծագումը, ընդլայնումը և տարածումը:⁵³

Գլխավոր քարտուղարի նշանակումը կատարվում է տարածաշրջանային հաջորդականությամբ: Հիմնադրումից ի վեր ՄԱԿ-ն ունեցել է ութ Գլխավոր քարտուղար.

- Տրիգվե Լի (Նորվեգիա) 1946-1952թթ.
- Դագ Համարշլոյդ (Շվեդիա) 1953-1961թթ.
- Ու Թան (Բիրմա) 1961-1971թթ.
- Կուրտ Վալդհայմ (Ավստրիա) 1972-1981թթթ.
- Խավիեր Պերես դե Կուելյար (Պերու) 1982-1991թթ.
- Բուրբոս Բուրբոս- Ղալի (Եգիպտոս) 1992-1996թթ.

⁵³ <<Միջազգային կազմակերպություններ>>, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002, էջ 14:

- Քոֆի Անան (Գանա) 1997-2006թթ.
- Բան Կի-Մուն (Հարավային Կորեա) 2007-2016թթ.
- Անտոնիո Գուտերեշ 2017թ –ից մինչև օրս:⁵⁴

Մասնագիտացված գործակալությունները հիմնադիր փաստաթղթերի և համաձայնագրերի հիման վրա մշտապես գործող միջազգային կազմակերպություններ են: Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը և 12 այլ անկախ կազմակերպություններ, որոնք հայտնի են որպես մասնագիտացված գործակալություններ, ՄԱԿ-ի հետ կապված են համագործակցության պայմանագրերով: Այս գործակալությունները, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը միջկառավարական համաձայնագրերով ստեղծված ինքնավար մարմիններ են: Նրանց միջազգային պատասխանատվության շրջանակներում ընդգրկված են տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական, առողջապահական և հարակից այլ հարցեր: Այս գործակալություններից մի քանիսը, ինչպես օրինակ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը և Փոստային համընդհանուր միությունը, ավելի երկար տարիների կյանք ունեն, քան ինքը՝ ՄԱԿ-ը: Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը ևս հատուկ պայմանագրով կապված է ՄԱԿ-ի հետ:

Մասնագիտացված գործակալությունները ունեն չորս հիմնական հատկանիշներ՝

- Հիմնադիր փաստաթղթերի միջկառավարական բնույթը
- ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված <<միջազգային մեծ պատասխանատվությունը >>

⁵⁴ <<Այն ամենը ինչ կուզենայի իմանալ ՄԱԿ-ի մասին>>, Երևան, 2009, էջ 22:

- Սոցիալ-տնտեսական և մարդասիրական ոլորտներում գործունեության իրականացումը
- Կապը ՄԱԿ-ի հետ:

Վերջին հատկանիշը յուրահատուկ է: Այդ հատկանիշով մասնագիտացված հիմնարկներն առանձնացվում են որպես հատուկ խումբ: Մասնագիտացված գործակալությունների գործունեությունը սահմանափակված չէ համապատասխան ժամկետով, իսկ կազմակերպությունների հիմնադիր ակտերը, որպես կանոն, դրանց լուծարման ընթացակարգ չեն նախատեսում:

Մասնագիտացված գործակալությունների լիազորություններն ընդգրկում են գրեթե բոլոր տնտեսական ու սոցիալական ոլորտները: Այդ գործակալություններն աշխարհի բոլոր երկրներին տեխնիկական և գործնական բնույթի օժանդակություն են ցույց տալիս: Համագործակցելով ՄԱԿ-ի հետ՝ նրանք օգնում են մշակել քաղաքականություն, չափանիշներ և ուղեցույցներ, խթանել օգնության միջոցառումները և կենտրոնացնել ֆինանսական միջոցները:⁵⁵

Համաշխարհային բանկն, օրինակ, ամեն տարի ավելի քան 20 միլիարդ ամերիկյան դոլար է հատկացնում զարգացման օժանդակության ծրագրերին: Զարգացող երկրներն այդ վարկերն օգտագործում են իրենց տնտեսություններն ամրապնդելու և շուկաներն ընդլայնելու նպատակով: Չնայած այն բանին, որ վարկերը տրվում են միայն կառավարություններին՝ կայուն աճ ապահովելու նպատակով, այնուամենայնիվ բանկերն աշխատում են նաև տեղական համայնքների, հասարակական կազմակերպությունների, մասնավոր ձեռնարկությունների և Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ: ՄԱԿ-ի մնացած ծրագրերը զարգացմանն ուղղված, իրենց գործունեությամբ համագործակցում են կառավարությունների և հասարակական կազմակերպությունների հետ: Պարենի համաշխարհային ծրագիրը

⁵⁵ Лукашук И.И., Международное право, М., 2008, стр., 54

աննդամթերքի օգնություն հատկացնող աշխարհի ամենախոշոր կազմակերպությունն է: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը բնակչությանն օգնություն հատկացնող միջազգային ամենախոշոր հիմնադրամն է: ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի նպատակն է ամենուր խրախուսել առողջ միջավայրի պահպանումը: Իսկ ՄԱԿ-ի Մարդու կենսավիճակի կարգավորման կենտրոնը օգնում է առողջության համար վտանգավոր պայմաններում ապրող մարդկանց:

Համաշխարհային տնտեսության մեջ զարգացող երկրների մասնակցությունը խրախուսելու համար ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը նպաստում է միջազգային առևտրի զարգացմանը: Համաժողովը համագործակցում է նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ, որն առանձին կազմակերպություն է, ժնևում գտնվող Առևտրի միջազգային կենտրոնի միջոցով նպաստում է զարգացող երկրների արտադրանքի արտահանմանը:

Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ): Աշխատանքի պայմաններն ու աշխատանքային հնարավորությունները բարելավելու նպատակով կազմակերպությունը մշակում է քաղաքականություն, ծրագրեր, ինչպես նաև աշխատանքային չափանիշներ, որոնք օգտագործվում են ամբողջ աշխարհում:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն(ՖԳԿ): Նպաստում է գյուղատնտեսական արտադրանքի, աննդամթերքի անվտանգության ապահովմանը, ինչպես նաև գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, աշխատում է վերացնել սովն ու թերսնումը, նաև աջակցում է իր անդամ պետություններին գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացման հարցում:

ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (ՄԱԿԳՄԿ): Խթանում է կրթության, մշակույթի, աշխարհի բնական և մշակութային ժառանգության

զարգացումը, գիտության մեջ միջազգային համագործակցությունը, մամուլի և հաղորդակցման ազատությունը:⁵⁶

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն(ԱՀԿ):

Համակարգում է առողջապահական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը և համայն մարդկության համար հնարավորինս ապահովում է բարձր մակարդակի առողջություն: Այն գործում է պատվաստման, առողջապահական կրթության և կենսական դեղամիջոցների մատակարարման բնագավառում:

Համաշխարհային բանկի խումբ(ՀԲ): Աղքատությունը նվազեցնելու և կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով ցածր տոկոսադրույքով և առանց տոկոսադրույքի վարկեր ու դրամական նպաստներ է տրամադրում, և տեխնիկական օգնություն ցույց տալիս զարգացող երկրներին կրթության, առողջապահության, հաղորդակցության և այլ նպատակների համար:

Արժույթի միջազգային հիմնադրամ(ԱՄՀ): Նպաստում է միջազգային արժույթային համագործակցությանն ու ֆինանսական համակարգի կայունացմանը: Նա խորհուրդներ է տալիս հիմնական տնտեսական քաղաքականության հարցերի առնչությամբ, ապահովում ժամանակավոր ֆինանսական աջակցություն:

Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն(ՔԱՄԿ):

Մշակում է օդային տրանսպորտի անվտանգության, ապահովության և արդյունավետության համար անհրաժեշտ միջազգային չափորոշիչներ և քաղաքացիական ավիացիայի բոլոր օդակներում ծառայում՝ որպես միջազգային համագործակցության համակարգող: Նվազեցնում է գլոբալ քաղաքացիական ավիացիայի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Փոստային համընդհանուր միություն(ՀՓՄ): Փոստային ծառայությունների համար սահմանում է միջազգային կանոններ, ցույց է տալիս տեխնիկական օգնություն

⁵⁶ www.unesco.

և փոստային խնդիրների առնչությամբ նպաստում համագործակցությանը:⁵⁷ Այսինքն խրախուսում է համընդհանուր, արդյունավետ, հասանելի փոստային ծառայությունների կայուն զարգացումը, որպեսզի հեշտացնի աշխարհի բնակչության հաղորդակցությունը:

Հեռահաղորդակցության միջազգային միություն(ՀՄՄ): Հեռահաղորդակցության բոլոր տեսակների զարգացման նպատակով խթանում է միջազգային համագործակցությունը, կոորդինացնում ռադիոյի և հեռուստատեսության հաճախականությունների օգտագործումը, նպաստում անվտանգության միջոցների զարգացմանն ու հետազոտությունների անցկացմանը:

Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպություն(ՕՀԿ): Խթանում է երկրի մթնոլորտում և եղանակի փոփոխությունների հետ կապված գիտական հետազոտությունների անցկացումը, հեշտացնում օդերևութաբանական տվյալների ընդհանուր փոխանակումը:

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն(ԱԷՄԳ): Լինելով ՄԱԿ-ի հովանու տակ գործող ինքնավար միջկառավարական կազմակերպություն՝ գործակալությունը խթանում է միջուկային էներգիայի օգտագործումը անվտանգ և խաղաղ նպատակների համար:⁵⁸

Այսպիսով այս բոլոր կազմակերպություններն ՄԱԿ-ի հետ միասին նրանք կազմում են ՄԱԿ-ի համակարգը որոնց շնորհիվ կազմակերպությունը իրականացնում է իր աշխատանքները ամողջ աշխարհում: Դրանք ունեն իրենց կառավարման մարմինները, առանձին բյուջե և քարտուղարություն և չափազանց համակարգված, բայց և տարաբնույթ գործողությունների ծրագրեր:

⁵⁷ Бобров Р. Л., Малинин, С. А. նշ. աշխ. էջ 57

⁵⁸ Basic Facts about the United Nations, N.Y., 1989, p., 194

2.2 ՄԱԿ-ի դերակատարումը միջազգային խաղաղության պահպանման և ամրապնդման գործում

1945թ. ՄԱԿ-ի ստեղծումը համաշխարհային պատմության մեջ հիմք դրեց նոր զարգացումների: Ինչպես արդեն բազմիցս նշվել է ՄԱԿ-ի գերագույն առաքելությունը խաղաղության պահպանումն է: Իր ստեղծումից ի վեր ՄԱԿ-ը բազմաթիվ անգամ կանխել է բանավեճերը պատերազմի վերաճելը, համոզելով հակադիր կողմերին բանակցությունների սեղանը նախընտրել զենքի ուժից, օգնելով խաղաղության վերականգնմանն այն դեպքում, երբ հակամարտությունն արդեն սկսվել է: Կազմակերպությունը դժվարին աշխատանքներ է իրականացրել խաղաղության կերտման ու պահպանման, ինչպես նաև մարդասիրական օգնության ոլորտներում: Իսկ հետհակամարտության շրջանում ՄԱԿ-ը համակարգված գործողություններով փորձել է պարզել բռնության արմատական պատճառները և նպաստել կայուն խաղաղության հաստատմանը:

Այսինքն, ՄԱԿ-ը ծառայում է որպես համընդհանուր համաժողով, որտեղ երկրները կարող են բարձրացնել և քննարկել ամենաբարդ խնդիրներ, այդ թվում՝ պատերազմին և խաղաղությանն առնչվող հարցերը: Երբ պետությունների ղեկավարները խոսում են երես առ երես, ծավալվում է երկխոսություն, ինչը կարող է հանգեցնել համաձայնության:⁵⁹

Այսպես, ՄԱԿ-ի կողմից ձեռնարկված որոշ քայլեր նշանակալի արդյունքներ են սովել: Օրինակ՝ Բեռլինյան ճգնաժամը(1948-1949թթ.), Կուբայի հրթիռային ճգնաժամը(1962թ.), Միջին Արևելքի ճգնաժամը(1973թ.): ՄԱԿ-ի միջամտությամբ

⁵⁹ <<Everything you Always wanted to Know about the United Nations>> United Nations Department of Public Information New York, 2008 ,p., 27

վերականգնվեց Քուվեյթի անկախությունը: 1990թ. դադարեցվեցին քաղաքացիական պատերազմները Կամբոջայում, Էլ Սալվադորում, Գվատեմալայում և Մոզամբիկում:⁶⁰

ՄԱԿ-ի գործունեությունը խաղաղության պահպանման գործում վերաբերում են մի քանի հիմնական բնագավառների. կանխարգելում, զինաթափում, խաղաղարարություն, խաղաղապահություն, խաղաղաշինություն: Արդյունավետ լինելու համար այդ գործողությունները պետք է հաջորդեն մեկը մյուսին կամ կատարվեն միաժամանակ: Անվտանգության խորհուրդը, Գլխավոր ասամբլեան և Գլխավոր քարտուղարը հիմնական մինյանց լրացնող դերն են կատարում խաղաղության և անվտանգության խթանման գործում:

Միջազգային պայմանագիր հանդիսացող ՄԱԿ-ի Կանոնադրությունը պարտավորեցնում է անդամ պետություններին իրենց միջև ծագած բանավեճերը կարգավորել խաղաղ ճանապարհով, այնպես որ չվտանգվեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և արդարությունը: Նրանք պարտավոր են զերծ մնալ ցանկացած պետության դեմ ուժի գործադրումից կամ այդ անելու սպառնալիքից և իրավունք ունեն ցանկացած բանավեճ ներկայացնել Անվտանգության խորհրդին: Պետությունները իրավունք չունեն իրենց միջազգային վեճերը թողնել չլուծված: Նրանք պետք է նաև ձեռնպահ մնան այնպիսի գործողություններից, որոնք կարող են սրել նրանց միջև ծագած վեճը: Անվտանգության խորհուրդը ՄԱԿ-ի խաղաղության և անվտանգության պահպանման համար պատասխանատու հիմնական մարմինն է, որի որոշումները ինչպես հայտնի է ի տարբերություն մյուս մարմինների որոշումների՝ ունեն պարտադիր ուժ:

Հարկ է նշել, որ միջազգային վեճերի խաղաղ լուծման սկզբունքի բովանդակությունը զարգացվեց միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970թ.-ի դեկլարացիայում, որը վերաբերում էր պետությունների միջև բարեկամական

⁶⁰ <http://www.wfuna>.

հարաբերություններին և համագործակցությանը՝ համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության: Գործնականում միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքի հաստատման համար կարևոր նշանակություն ունեցավ 1982թ.-ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից միջազգային վեճերի խաղաղ լուծման մասին Մանիլայում ընդունված դեկլարացիան և միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող վեճերի և իրադրությունների կանխարգելման ու վերացման և այդ ասպարեզում ՄԱԿ-ի դերի մասին 1988թ.-ի դեկլարացիան: Երկու փաստաթղթերն էլ, ընդունելով պետությունների պատասխանատվությունը վեճերի ու իրավիճակների կանխարգելման գործում, դրա հետ մեկտեղ ընդգծում են այն կարևոր դերը, որ այս ասպարեզում կարող են խաղալ ՄԱԿ-ը և նրա անդամները: Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքի իրավաբանական բովանդակությունը կազմում է վեճի մասնակից պետությունների իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը:

«Միջազգային վեճ» հասկացությունը սովորաբար օգտագործվում է նշելու պետությունների միջև եղած տարաձայնությունները, այդ թվում նաև նրանք, որոնք կարող են վտանգել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: Վեճի ծագման պահից և նրա զարգացման ու գոյության ողջ ընթացքում պետք է գործի միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը՝ որպես միջազգային իրավունքի համընդհանուր, հրամայական պահանջ:

ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ կոնֆլիկտային հարաբերությունները դասակարգելու համար օգտագործվում է երկու հասկացություն՝ «վեճ» և «իրավիճակ», սակայն Կանոնադրությունը դրանց սահմանումները չի տալիս: Այդ սահմանումները տրվում են՝ համաձայն միջազգային իրավունքի ուսմունքի: Այսպիսով, համաձայն վերջինի՝ վեճն առկա է այն դեպքում, երբ պետությունները փոխադարձ պահանջներ են ներկայացնում միևնույն խնդրո առարկայի վերաբերյալ:

Իրավիճակը առկա է, երբ պետությունների շահերի ընդհարումը չի ուղեկցվում փոխադարձ պահանջներ ներկայացնելով, թեև բախումներ է ծնում նրանց միջև: Միջազգային վեճերը և իրավիճակները լինում են երկու տեսակ՝

- որոնց շարունակվելը սպառնում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը,
- որոնց շարունակվելը չի սպառնում միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը:

Վեճ թե՞ իրավիճակ հարցի լուծումը թողնվում է Անվտանգության խորհրդին: Կանոնադրության 34-րդ հոդվածում ասվում է. «Անվտանգության խորհուրդը լիազորվում է քննարկել ցանկացած վեճ և ցանկացած իրավիճակ, որոնք կարող են հանգեցնել միջազգային բախումների կամ գծտությունների, պարզելու համար արդյոք այդ վեճի կամ իրավիճակի շարունակումը չի՞ սպառնա միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը»:⁶¹ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդհարումները «վեճ» կամ «իրավիճակ» բնորոշելուց բխում են տարբեր իրավական հետևանքներ: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 27-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Անվտանգության խորհրդի մշտական անդամը, որը վիճող կողմ է, որոշում ընդունելու ժամանակ պետք է ձեռնպահ մնա քվեարկությունից: Այստեղ գործում է այն սկզբունքը, որ ոչ ոք չի կարող լինել դատավոր իր սեփական գործով: Այս դրույթը, սակայն, չի վերաբերում իրավիճակներին: Իսկ կանոնադրության 37 և 38-րդ հոդվածների համաձայն՝ Անվտանգության խորհուրդը կարող է կողմերին երաշխավորել ոչ թե իրավիճակների, այլ վեճերի կարգավորման պայմաններ: Գործը ՄԱԿ-ի Միջազգային դատարան կարելի է հանձնել միայն վեճի և ոչ թե իրավիճակի դեպքում:

ՄԱԿ-ը և նրա մարմինները կարևոր դեր են խաղում այն վեճերի և իրավիճակների կանխարգելման և վերացման հարցում, որոնք կարող են հանգեցնել միջազգային

⁶¹ Charter of the United Nations, Chapter VI, article 34

տարաձայնությունների և առաջացնել միջազգային վեճ, որի շարունակվելը կարող է սպառնալ միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը: Ուստի վեճի մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին դիմելու հնարավորությունը: ⁶²

Այսպիսով, երբ բանավեճը ներկայացվում է Անվտանգության խորհրդի քննարկմանը, խորհուրդը նախ խնդրում է կողմերին այն կարգավորել խաղաղ միջոցներով: Եվ բանավիճող կողմերին ներկայացնում է խաղաղ ճանապարհով վեճերը լուծելու պաշտոնական առաջարկ:

Երբ արդեն բանավեճը վերաճում է ռազմական գործողությունների, խորհուրդը միջոցներ է ձեռնարկում հնարավորինս արագ կերպով ավարտելու այն: Խորհուրդը իրավասու է հակամարտության շրջանում ռազմական դիտորդներ կամ խաղաղարար ուժեր տեղակայել՝ սատարելու համար խաղաղարար գործընթացին:

Ըստ ՄԱԿ-ի Կանոնադրության 7-րդ գլխի Անվտանգության խորհուրդը իրավունք ունի միջոցներ ձեռնարկել իր որոշումները իրականացնելու համար, մասնավորապես կարող է էմբարգո և պատժամիջոցներ նախաձեռնել կամ թույլատրել ուժի գործադրումը՝ ագրեսիա ցուցաբերած պետության դեմ՝ հանուն միջազգային խաղաղության և անվտանգության:

Սակայն անվտանգության խորհուրդը նման գործողությունների դիմում է ծայրահեղ դեպքում, երբ արդեն սպառվում են հակամարտությունը խաղաղ կարգավորելու բոլոր ուղիները, և երբ խաղաղության խախտման կամ ագրեսիայի սպառնալիք գոյություն ունի:

Առաջնորդվելով նույն՝ 7-րդ գլխի դրույթներով՝ Անվտանգության խորհուրդը հիմնել է միջազգային տրիբունալներ՝ միջազգային մարդասիրական և մարդու

⁶² <<ООН и поддержание международного мира>>, М., 1973, стр., 9

իրավունքների օրենքների կոպիտ խախտումների, այդ թվում ցեղասպանության մեջ մեղադրվող անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

Ինչ վերաբերում է Գլխավոր ասամբլեայի ձեռնարկած գործողություններին միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման գործում, ապա ինչպես հայտնի է, ըստ Կանոնադրության Գլխավոր ասամբլեան խաղաղության պահպանման բարդ հարցերի վերաբերյալ կարող է քննարկել համագործակցության հիմնական սկզբունքները և միաձայնության հասնելու ուղիներ առաջարկել, ասպարեզ տրամադրել բողոքներ արտահայտելու և դիվանագիտական փոխանակումներ կատարելու համար: Գլխավոր ասամբլեան հաճախ իրականացրել է նաև արտակարգ նստաշրջաններ՝ նվիրված զինաթափմանը, օրինակ Պաղեստինի, Աֆղանստանի և այլ դեպքերում:⁶³

Պետք է նշել, որ խաղաղության և անվտանգության հարցերը գլխավոր ասամբլեան քննարկում է Առաջին (զինաթափման և միջազգային անվտանգության հարցերով) և Չորրորդ (հատուկ քաղաքական և ապագադրությամբ հարցերով) կոմիտեներում:

Բանավեճի վերաճումը հակամարտությունների և դրանց կրկնությունը կանխելու հիմնական ռազմավարություններն են կանխարգելիչ դիվանագիտությունը, կանխարգելիչ տեղակայումը և կանխարգելիչ զինաթափումը:

Կանխարգելիչ դիվանագիտությունը ենթադրում է գործողություններ՝ ուղղված բանավեճերի կանխարգելմանը, դրանց կարգավորումը նախքան հակամարտության վերաճելը կամ արդեն ծագած հակամարտությունների տարածման սահմանափակումը: Այն կարող է կատարվել միջնորդության, հաշտեցման կամ բանակցությունների ձևով: Վաղ նախազգուշացումը կանխարգելման կարևոր տարր է, ուստի ՄԱԿ-ը ուշադիր հետևում է աշխարհում տեղի ունեցող քաղաքական և այլ

⁶³ <<Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին>>, Երևան, 2002թ. էջ 71:

զարգացումներին՝ միջազգային անվտանգության և խաղաղության համար սպառնալիքները հնարավորինս շուտ նկատելու և Անվտանգության խորհրդին ու Գլխավոր քարտուղարին կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելու հնարավորություն տալու համար:⁶⁴

Կանխարգելիչ զինաթափման նպատակն է դադարեցնել զենքի տարածումը, կրճատել և իսպառ վերացնել զանգվածային ոչնչացման զենքերը հատկապես՝ հակամարտությունների հակված տարածաշրջաններում: ՄԱԿ-ը մշտապես հանդիսացել է զինաթափման բանակցություններ վարող, հանձնարարականներ մշակող և հետազոտություններ նախաձեռնող համաժողով: Նա հովանավորում է զինաթափությունների վերաբերյալ բազմակողմանի բանակցությունները գիտաժողովներում և միջազգային նշանակության այլ ատյաններում: Այս բանակցությունների ընթացքում կնքվել են այնպիսի պայմանագրեր, ինչպիսիք են Միջուկային զենքի չտարածման մասին դաշնագիրը (1968թ.), Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին դաշնագիրը (1996թ.) և միջուկազերծ գոտիներ հաստատող պայմանագրերը:⁶⁵

Կան նաև այլ պայմանագրեր, որոնց համաձայն արգելվում են քիմիական (1992թ.) և կենսաբանական զենքի (1972թ.) կատարելագործումը, արտադրությունն ու պահեստավորումը, արգելվում կամ սահմանափակվում են այլ զինատեսակներ: 1997թ. ավելի քան հարյուր պետություններ ստորագրեցին Ականների արգելման մասին Օտտավայի կոնվենցիան: ՄԱԿ-ը հորդորում է բոլոր ազգերին հավատարիմ մնալ այն պայմանագրերին, որոնց համաձայն արգելվում է զանգվածային ոչնչացման զենքերը:⁶⁶

Վիեննայում հիմնված Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, որպես երաշխիք ունենալով մի խումբ համաձայնագրեր, վերահսկում է, որ խաղաղ

⁶⁴<http://ysuinterlaw.wordpress>.

⁶⁵ www.un.org/terrorism/

⁶⁶ <<ՄԱԿ-ի մոդել>> ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ Երևան 2005թ. էջ 12:

նպատակների համար նախատեսված միջուկային զենքերը չվերածվեն ռազմական նպատակների ծառայող զենքերի: Իսկ Հաագայում հիմնված Քիմիական զենքի արգելման կազմակերպությունն ամբողջ աշխարհում տեղեկատվություն է հավաքում քիմիական զենքերի վերաբերյալ և կանոնավոր ստուգումներ անցկացնում՝ պարզելու՝ ա՞րդյոք երկրները հավատարիմ են Քիմիական զենքի մասին կոնվենցիայի հիմնադրություններին:

Կանխարգելիչ զինաթափման գործողություններ են իրականացվել Մավլադորում, Մոզամբիկում և այլ վայրերում, դա կատարվել է մարտիկների զորացրման և զենքերի հավաքման ու ոչնչացման միջոցով, ինչը եղել է խաղաղության ընդհանուր համաձայնագրի մաս: *Ջենքի ոչնչացումն այսօր, կանխում է դրա վաղվա կիրառումը:* Խաղաղարությունը ենթադրում է դիվանագիտական միջոցների կիրառում՝ համոզելու համար կողմերին դադարեցնել թշնամական գործողությունները և գտնել բանավեճի բանակցային կարգավորումը: ՄԱԿ-ը հակամարտությունների արմատական պատճառների, դրանց զսպման և կարգավորման համար զանազան միջոցներ է տրամադրում: Անվտանգության խորհուրդը կարող է հակամարտության կարգավորման ուղիներ առաջարկել կամ խնդրել Գլխավոր քարտուղարի միջնորդությունը:

Խաղաղարարության գործում Գլխավոր քարտուղարը կենտրոնական դեր է կատարում թե՛ անձամբ, թե՛ հատուկ պատվիրակների կամ հատուկ հանձնարարություններով առաքելությունների միջոցով, ինչպիսիք են օրինակ փաստահավաք կամ բանակցային առաքելությունները:

Արդեն նշվել է, որ Գլխավոր քարտուղարը կարող է օգտագործել իր «Բարի ծառայությունները» կամ կիրառել կանխարգելող դիվանագիտությունը, որը նպատակ ունի վիճարկվող հարցերը լուծել նախքան դրանց սրվելը: Նա կարող է օգտագործել ցանկացած գրասենյակ, կարող է փաստեր հավաքելու առաքելությամբ

աշխատախմբեր գործուղել տվյալ տարածաշրջան, օժանդակել տեղում խաղաղարարությանն ուղղված միջոցառումներին, հիմնել ՄԱԿ-ի քաղաքական հարցերի տեղական գրասենյակ՝ նպատակ ունենալով նպաստել ընդդիմադիր կողմերի փոխըմբռնման հաստատմանը:

Գլխավոր քարտուղարի օգնությամբ հաճախ չեզոքացվել է խաղաղությանը սպառնացող վտանգը կամ ձեռք բերվել համաձայնություն խաղաղ կերպով վեճերը լուծելու համար: Օրինակ 1988թ. Գլխավոր քարտուղարի գործունեությունը օգնել է վերջ դնել Իրաքի և Իրանի միջև 1980թ.-ից ընթացող պատերազմին: Աֆղանստանում Գլխավոր քարտուղարի և նրա պատվիրակի միջնորդությունը հանգեցրեց 1988թ. համաձայնագրի կնքմանը, որով երկրից դուրս բերվեցին խորհրդային զորքերը: Կամբոջան, Կենտրոնական Ամերիկան, Կիպրոսը, Մերձավոր Արևելքը, Մոզամբիկը (ականազերծման ծրագիր) և Նամիբիան (1989թ.ՄԱԿ-ի կողմից ընտրությունների վերահսկում) վկայում են Գլխավոր քարտուղարի խաղաղարար դերակատարման մասին:

ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունները կարևոր գործիք են միջազգային հանրության ձեռքին՝ աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանման համար: Խաղաղապահական գործողությունների դերը միջազգայնորեն ճանաչվեց 1988թ.-ին, երբ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը Նոբելյան մրցանակ ստացան:

Անվտանգության խորհուրդը մշակում է ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների ծրագիրը, սահմանում է գործունեության շրջանակները և ՄԱԿ-ին տալիս է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման իրավունք (մանդատ): Այդ գործողություններում կարող են ներգրավված լինել ռազմական դիտորդական առաքելություններ, խաղաղապահ ուժեր կամ երկուսը՝ միաժամանակ: Ռազմական դիտորդական առաքելությունները կազմավորվում են անզեն սպաներից՝ այս կամ այն համաձայնագիրը կամ հրադադարը հսկելու համար: Խաղաղապահական

ուժերի զինվորները զենք ունեն, սակայն մեծ մասամբ դրանք կարող են օգտագործել միայն ինքնապաշտպանության նպատակով:

Խաղաղապահական գործողությունների գերակշիռ մասն իրենից ներկայացնում է ռազմական բնույթի պարտավորություններ, ինչպես օրինակ՝ հրադադարի պահպանում կամ բուժերային (պատնեշային) գոտու ստեղծում, քանի դեռ բանակցող կողմերը երկարաժամկետ լուծում են որոնում:

Խաղաղապահ գործողությունները կարող են տևել ամիսներ կամ տարիներ: ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների գոտին Հնդկաստանի և Պակիստանի միջև անցնող հրադադարի գոտում (Ջամու և Քաշմիր) ստեղծվել է 1949թ., իսկ խաղաղապահ ջոկատները Կիպրոսում հաստատվել են 1964 թվականից: Սակայն ՄԱԿ-ը կարողացավ իր առաքելությունը Լիբիայի և Չադի միջև ընկած Սուեզի միջանցքում ավարտել մեկ ամսից քիչ ավելի ժամանակահատվածում:

Խաղաղության որոնումներում Միավորված ազգերի կազմակերպությունը ավելի ու ավելի շատ է համագործակցում նաև տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

Տարիների ընթացքում ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների առջև դրվել են հետևյալ խնդիրները.

- Հրադադարի պահպանում և ուժերի տարանջատում
- Կանխարգելիչ տեղակայում
- Մարդասիրական գործողությունների պաշտպանություն
- Համապարփակ խաղաղ կարգավորման իրականացում

Կանոնադրության VII գլխի համաձայն՝ Անվտանգության խորհուրդը կարող է հարկադրական միջոցներ ձեռնարկել միջազգային խաղաղությունն ու

անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար, այդ թվում՝ տնտեսական պատժամիջոցներ և միջազգային ռազմական գործողություններ:⁶⁷

Քանիցս, երբ վտանգված է եղել խաղաղությունը և դիվանագիտական ջանքերն արդյունք չեն տվել Անվտանգության խորհուրդը դիմել է հարկադրյալ միջոցների: Օրինակ պատժամիջոցներ է կիրառվել Իրաքի, նախկին Հարավսլավիայի, Լիբիայի, Հայիթիի, Ռուանդայի, Սոմալիի, Սուդանի և այլ երկրների նկատմամբ: Ձեռնարկված միջոցները ներառում էին համապարփակ տնտեսական և առևտրական պատժամիջոցներ կամ ավելի որոշակի միջոցներ, ինչպես օրինակ զենքի էմբարգո, ուղևորության վրա դրված արգելքը և ֆինանսական ու դիվանագիտական սահմանափակումները:

Պատժամիջոցները նպատակ են հետապնդում ճնշում գործադրել այս կամ այն պետության կամ մարմնի վրա, որպեսզի վերջիններս կատարեն Անվտանգության խորհրդի սահմանած ուղենիշները՝ առանց ուժի գործադրման:

Հարկ է նշել, որ այս ամենի հետ մեկտեղ շատ պետություններ ու մարդասիրական կազմակերպություններ մտահոգություն են հայտնում ազգաբնակչության ամենաանպաշտպան խավերի, օրինակ կանանց ու երեխաների վրա պատժամիջոցների հնարավոր բացասական ազդեցության կապակցությամբ: Մտահոգություններ կան նաև երրորդ երկրների տնտեսության վրա պատժամիջոցների անցանկալի ազդեցության առնչությամբ, քանի որ նրանք ստիպված են լինում խզել առևտրական ու տնտեսական կապերը պատժված երկրների հետ:

Ավելի ու ավելի լայն տարածում է գտնում այն տեսակետը, որ պետք է բարելավել ու մշակել պատժամիջոցների կիրառումը: Պատժամիջոցների բացասական հետևանքները կարելի է նվազեցնել Անվտանգության խորհրդի բանաձևերում

⁶⁷ Charter of the United Nations, Chapter VII, article 50.

ուղղակիորեն մարդասիրական բացառություններ կատարելով: Լայն ճանաչում են ստացել այսպես կոչված «խոհեմ պատժամիջոցները», որոնց նպատակն է բարելավել այդ պատժամիջոցների մարդասիրական հետևանքները, ճնշում գործադրելով ոչ թե լայն հասարակության, այլ՝ իշխանությունների նկատմամբ:

Երբ խաղաղարար ջանքերը ձախողվում են, անդամ պետությունները կարող են արտոնել Կանոնադրության 7-րդ գլխում նախատեսված առավել կոշտ միջոցների կիրառումը: Անվտանգության խորհուրդն անդամ պետությունների կոալիցիաներին թույլատրում է կիրառել «անհրաժեշտ բոլոր միջոցները» ներառյալ ռազմական գործողություններ հակամարտությունների կարգավորման համար, ինչպես օրինակ՝ Իրաքի ներխուժումից հետո Քուվեյթի ինքնիշխանությունը վերականգնելիս (1991թ.), Ռուանդայում քաղաքացիական բնակչության կյանքին սպառնացող վտանգը չեզոքացնելիս (1994թ.), Հայիթիի ժողովրդավարական կերպով ընտրված կառավարությունը վերականգնելիս (1994թ.), Ալբանիայում մարդասիրական գործողությունների անվտանգությունն ապահովելիս (1997թ.) և Արևելյան Թիմորում խաղաղությունն ու անվտանգությունը վերահաստատելիս (1993թ.): Թեև այդ գործողությունները արտոնվում են Անվտանգության խորհրդի կողմից, այնուամենայնիվ լիովին գտնվում են անդամ պետությունների վերահսկողության տակ: Խաղաղաշինությունը ենթադրում է հակամարտությունների վերահսկում և կանխարգելում և այն կառույցների ու միջոցների աջակցում, որոնք ուժեղացնում և ամրապնդում են խաղաղությունը:

Կանխարգելիչ խաղաղաշինությունը ենթադրում է հակամարտության բուն պատճառների վերացմանն ուղղված երկարաժամկետ քաղաքական, վարչաիրավական և զարգացումը խթանող գործունեություն:

Հետկոնֆլիկտային խաղաղաշինությունն իրենից ներկայացնում է այնպիսի ջանքերի ամբողջություն, որոնց նպատակն է կանխել հակամարտության վերսկսումը, խթանել խաղաղության գործընթացը և այդ կերպ դնել կայուն խաղաղության հիմքերը:

Վերացնելով հակամարտությունների բուն պատճառները՝ խաղաղաշինությունը դառնում է ճգնաժամերի խաղաղ հանգուցալուծմանն ուղղված ջանքերի կարևորագույն տարրերից մեկը: Խաղաղաշինությունը իրականանում է Միավորված ազգերի կազմակերպության մի շարք կազմակերպությունների օգնությամբ, օրինակ Համաշխարհային բանկի, տարածաշրջանային, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների, նաև տեղի քաղաքացիական խմբերի կողմից:

ՄԱԿ-ի օժանդակությունը հաճախ առանցքային նշանակություն է ունեցել ժողովրդավարության կառուցման և ամրապնդման գործում: Պետք է նշել, որ ՄԱԿ-ը կանոնավոր միջազգային ուստիկանություն կամ ռազմական ուժեր չունի և իր խաղաղապահ գործողություններն իրականացնում է անդամ երկրների կողմից տրամադրվող անհրաժեշտ զինձառայողների, սպառազինությունների և այլ նյութական միջոցներով: Խաղաղապահները կրում են իրենց պետության համազգեստը, որպես խաղաղարար զինձառայող նրանք տարբերվում են միայն ՄԱԿ-ի կապույտ սաղավարտով կամ գլխարկով և թևանշանով: Հարկ է ընդգծել, որ անդամ երկրները զինված ուժեր են տրամադրում կամավորության սկզբունքով:⁶⁸

Միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման ճանապարհին շատ կարևոր է հատկապես ՄԱԿ-ի մղած պայքարը միջազգային ահաբեկչության դեմ: Հաշվի առնելով միջազգային հանրությանը սպառնացող այս վտանգը վերացնելու վճռականությունը՝ ՄԱԿ-ը և իր գործակալությունները մշակել են բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք միջազգային հանրությանը ահաբեկչությունը կանխելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հնարավորություն են ընձեռում: 1963թ. ՄԱԿ-ի միջնորդությամբ տասներեք գլոբալ համաձայնագիր է ստորագրվել, ներառյալ

⁶⁸ <<Everything you Always Wanted to Know About the United Nations>>.,United Nations Department of Public Information , New York, 2008, p.,29

պատանդ վերցնելու, ինքնաթիռների առևանգման, ահաբեկչական ռմբակոծությունների և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայմանագրերը:

Այսպես, ՄԱԿ-ի կողմից ձեռնարկվող խաղաղապահ գործողությունները նպատակ ունեն խթանել կառավարման գործընթացը, պաշտպանել քաղաքացիական օրենքներն ու կարգուկանոնը, արդար ընտրություններն ու մարդու իրավունքներն այն երկրներում, որոնք պայքարում են հետպատերազմական շրջանի հետևանքների դեմ: Միաժամանակ օգնում է հակամարտություններից տուժած երկրներին՝ վերականգնելու իրենց վարչական, առողջապահական, կրթական և այլ ծառայությունները:

Գլուխ Երրորդ

Պատմա-համեմատական մեթոդի կիրառումը ՄԱԿ-ի ձևավորումը և կառույցը թեմայի դասավանդման ընթացքում

Պատմահամեմատական մեթոդ պատմական գիտելիքներ ձեռք բերելու և ներկայացնելու ամենատարածված միջոցներից է: Կարելի է ասել, որ առանց համեմատության չի կարող իրականացվել ոչ մի գիտական հետազոտություն: Համեմատության եղանակը պատմական ճանաչողությունում օգտագործվել է դեռևս անտիկ դարաշրջանում, երբ պատմագիրներն առաջնորդվել են պատմության շրջափուլային (ցիկլիկ) փոփոխման հայեցակարգով: Այդ հայեցակարգում համեմատությունը հանդես էր գալիս որպես փակ, կրկնվող շրջափուլերի մասին պատկերացումների ստեղծման միջոցներից մեկը: Դրանում գործնականում կարող էին

համեմատվել ցանկացած դեպք, երևույթ, գործընթաց: Պետք է նկատել, որ պատմահամեմատական մեթոդի առաջացման սկզբնական շրջանում բացակայում էր հասարակական երևույթների որակական որոշակիության պատկերացումը: Նոր ժամանակներում պատմության շրջափուլային փոփոխման ուսմունքը փոխարինվեց Վիկոյի շրջապտույտի տեսությամբ: Այն հիմնված էր առանձին դեպքերի և ամբողջական դարաշրջանների համեմատության վրա: Դրանցում նա վեր է հանել տարբերությունները, թեև հիմնականում՝ ի վնաս անհատականի, փնտրել է նմանը, կրկնվողը, օրինաչափը: Նա գրկել է պատմության շրջապտույտի գաղափարը երևույթների համադրման ռացիոնալորեն հիմնավորված չափանիշից: Այդ առումով լուսավորական պատմագրության բնորոշ գծերից է այն, որ ունի նման չափանիշ: Դա համաշխարհային պատմության միասնականության վերաբերյալ համոզմունքն է՝ որպես միասնական և անփոփոխ մարդկային բնության արդյունք: Լուսավորիչները պատմահամեմատական մեթոդն օգտագործում էին շատ լայն. համեմատում էին նույնիսկ այն, ինչը սկզբունքորեն համեմատել չէր կարելի: Համեմատության չափանիշը միասնական և անփոփոխ մարդկային բնությունն էր: Այդպիսի ըմբռնումը խանգարում էր երևույթների անընդմեջ փոփոխվող աշխարհում ճանաչելու առանձնահատուկը, յուրօրինակը, մտածողությունն ուղղորդում էր նմանի, ընդհանրականի բացահայտմանը: Ուստի լուսավորական շրջանում պատմահամեմատական մեթոդի կիրառումը հանգեցրել է մակերեսային համեմատությունների և համանմանությունների (անալոգիաների) առաջադրմանը:

Նկատենք, որ պատմահամեմատական մեթոդի էությունը կախված է պատմական իրականության բնույթից: Այն մի կողմից անհատական է, անկրկնելի, մյուս կողմից գործ ունենք նմանի, ընդհանրականի հետ: Չէ՞ որ մարդիկ և հասարակական կյանքն ու միջավայրն ունեն ոչ միայն տարբերություններ, անհատականություն, այլև ընդհանրություններ, նմանություններ:

Պատմահամեմատական մեթոդը թույլ է տալիս համադրման, համեմատության միջոցով անհատականի մեջ բացահայտել ընդհանրականն ու նմանը: Համեմատությունն արդյունավետ կլինի այն դեպքում, եթե գործ ունենանք նույն կարգի, նույն հիմքերով, առավել շատ ընդհանրական, էական ներքին հատկանիշներ ունեցող օբյեկտների, երևույթների հետ: Հասարակական կյանքը ոչ թե դեպքերի պարզ ընթացք է, այլ որակական ամբողջությունների, փուլերի դինամիկ հաջորդափոխություն: Ուստի պատմական ճանաչողության այդ փուլերի առանձնացումը կարևոր խնդիր է: Այդպիսի ամբողջությունների, փուլերի բացահայտումը ևս իրականացվում է համեմատության միջոցով, սակայն որոշ մտածողներ գտնում են, որ դա գիտական ճանաչողության, վերլուծության առանձնահատուկ մեթոդ է: Այն անվանում են տիպաբանացման մեթոդ: Դրա խնդիրն է օբյեկտներին, երևույթներին, գործընթացներին բնորոշ էական հատկանիշների միջոցով կարգավորել, խմբավորել դրանք որպես որակապես որոշակի տիպեր, դասեր, խմբեր:

Ուսուցիչը պետք է դիտարկի առկա փաստերը՝ նախագծելով դրանց կանխատեսելի և անկանխատեսելի զարգացումներն ու հետևանքները: Յուրաքանչյուր մեթոդի ճիշտ ընտրությունը պատմաբան-ուսուցչի համար ելակետային է: Դասապրոցեսում հաջորդական և համակարգված կերպով կիրառվող այս կամ այն մեթոդը ենթադրում է փաստերի ամբողջական հետազոտում՝ դրանց պատմական, ժամանակագրական և տարաբնույթ այլ զարգացումներին զուգընթաց: Պատմաբան-ուսուցիչը կարող է դասապրոցեսի խթանման, իմաստավորման և կշռադատման (ԽԻԿ) փուլերում կիրառել ուսուցման փոխներգործուն մի շարք մեթոդներ: ԽԻԿ-ը ուսուցման ժամանակակից մեթոդների համակարգ է, որի միջոցով ապահովվում է դասապրոցեսի փուլային կազմակերպումը: Այդ փուլերն են.

- խթանման,
- իմաստավորման,

- կշռադատման:

Փուլերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը հարկ է դիտարկել պատմական գիտելիքների յուրացման արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Պատմության դասապրոցեսի **խթանման փուլի** առանցքային **նպատակներն են՝**

- նոր նյութի վերաբերյալ սովորողների շրջանում առկա գիտելիքների կամ տեղեկացվածության մակարդակի բացահայտումը,
- նրանց ակտիվ մասնակցության ապահովումը նյութի քննարկման գործընթացին,
- սովորողների իմացական և ճանաչողական մղումների գործնական ակտիվացումն ու խթանումը, գիտելիքի ձեռքբերման պահանջմունքի ձևավորումը:

Դասապրոցեսի այս փուլում առավել նպատակահարմար է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝

- ուղեղային մտազրոհը,
- պրիզման,
- ձևագնդի մեթոդը

Դասի խթանման փուլում կիրառելով **«ուղեղային մտազրոհ»** մեթոդը՝ պատմաբան-ուսուցիչը նախ և առաջ հստակեցնում է դասի թեման, նպատակն ու լուծելիք խնդիրները, այնուհետև մշակում է «լավագույն տարբերակի» ընտրության չափանիշներն ու նախագծում դասի ընթացքը՝ դասարանի քննարկմանը ներկայացնելով որևէ պատմական հիմնախնդիր: Նա սովորողներից ակնկալում է խնդրի լուծման տարաբնույթ տարբերակներ, որի համար խթանում է նրանց ստեղծագործական, իմացական և ճանաչողական ակտիվությունը: Քննարկմանն ակտիվորեն մասնակցում են դասարանի բոլոր անդամները՝ հանդես գալով մերթ մտքերի և գաղափարների առաջադրողների, մերթ՝ քննադատների դերում: Այս մեթոդի կիրառման

պայմաններում ուսուցչի կողմից դասապրոցեսում գործադրվում են գործունային և անձնակենտրոն մոտեցումներ:

«Մտագրոհ» մեթոդն ունի կիրառման որոշակի փուլեր: Դրանք են՝

- գաղափարների շտեմարանի ձևավորման,
- ձևավորված գաղափարների վերլուծման,
- ստացված արդյունքների մշակման:

Դասի խթանման փուլում նպատակահարմար է նաև «Պրիզմա» փոխներգործուն մեթոդի կիրառումը: Այս մեթոդը նպաստում է սովորողների ազատ և անկաշկանդ մտածողության զարգացմանը: Պրիզմայի հիմնական նպատակն է ներկայացվող պատմական երևույթի, փաստի, հասկացության, իրադարձության կամ գաղափարի վերաբերյալ սովորողների ենթագիտակցության մեջ զուգորդված կապերի արձանագրումն ու բացահայտումը: «Պրիզմա» ակտիվ մեթոդն ունի գծագրական դասակարգչի ձև, ինչի շնորհիվ սովորողների մտքի զարգացման ընթացքը դառնում է ակներև ու պատկերավոր: Սույն մեթոդի կիրառումը ապահովում է դասապրոցեսի հաջող մեկնարկը:

Նորագույն պատմության դասընթացը հանդիսանում է ընդհանուր պատմության տրամաբանական ավարտը: Ուսուցիչը հնարավորություն է ունենում սովորողների մեջ ձևավորելու մի շարք կարևորագույն աշխարհայացքային գաղափարներ և հասկացություններ:⁶⁹

Ուսուցիչը յուրաքանչյուր դասընթացի համար պետք է իրականացնի ընթացիկ նախապատրաստում, որն իր մեջ ընդգրկում է դասի անցկացման պլանը: Պլանում պետք է տրված լինեն.

դասի նպատակները,

դասի տիպը,

⁶⁹ Հ. Առնոյան, Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր. 2001, էջ 72:

դասի անցկացման հիմնական մեթոդը,

դասի անցկացման լրացուցիչ մեթոդը (այն դեպքում, եթե սովորողները պատրաստ չլինեն հիմնական մեթոդի կիրառմանը),

դասի բովանդակության վերաբերյալ ուսուցողական նյութերը (թեմայի վերաբերյալ քննարկումներ, գրատախտակին աղյուսակների կազմում ու լրացում և այլն),⁷⁰

դասի ժամանակ օգտագործվող պարագաները կամ դասի կահավորումը,

նոր նյութի հաղորդում,

սովորողների կողմից նյութի ընկալման մակարդակի ստուգումը,

գնահատման համակարգը,

սոնային աշխատանքի հանձնարարումը:

ՄԱԿ-ի ձևավորման գործընթացի, գլխավոր կառույցների գործառույթների թեման ընդգրկված է նաև դպրոցական դասագրքում, այն վերաբերում է համաշխարհային պատմության նորագույն շրջանին:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Կարողանալ բացահայտել ՄԱԿ-ի ձևավորման նախադրյալները, վերլուծել պատերազմի ավարտական փուլում և հետպատերազմյան տարիներին աշխարհում ձևավորված իրադրությունը, բացատրել ՄԱԿ-ի հիմնադրման, որպես համաշխարհային խաղաղապահ կառույցի, միջազգային հակամարտությունների բանակցային ճանապարհով լուծման կարևորությունը ողջ աշխարհի համար: Դրանից հետո պետք է համեմատել և համադրել մեկ այլ նմատապ կառույցի, մասնավորապես Ազգերի լիգայի հետ:

Համեմատական-համադրական մեթոդը հիմնված է ուսումնասիրվող երևույթների միջև նմանության կամ տարբերության բացահայտման, ինչպես նաև մեկի նկատմամբ

⁷⁰ А.Т.Степанищев, Методика преподавания и изучения истории, Часть 1, М. 2002, ст. 143.

մյուսի առավելությունների հաստատման վրա: Այն հետազոտության արդյունավետ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս համեմատության օգնությամբ բացահայտել ՄԱԿ-ի և Ազգերի լիգայի զարգացման մակարդակների ու միտումների օրինաչափությունները, ընդհանրությունները և առանձնահատկությունները



Եզրակացություն

ՄԱԿ-ի ստեղծումն ու գործունեությունը միջազգային հարաբերությունների զարգացման և ընդլայնման համար կարևոր նշանակություն ունեցավ: ՄԱԿ-ը իր ստեղծման պահից մինչև օրս շարունակում է խաղաղապահ գործունեություն ծավալել ամբողջ աշխարհով մեկ: ՄԱԿ-ը պատասխանատվություն է ստանձնում համընդհանուր մակարդակով բարձր պահելու մարդկային արժանապատվության, հավասարության ու անաչառության սկզբունքները: ՄԱԿ-ը իր առջև խնդիր է դրել սատարել այն բոլոր ջանքերին, որոնք ուղղված են բարձր պահել բոլոր երկրների ինքնիշխան հավասարությունը, հարգել նրանց տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, խաղաղ ճանապարհով և արդարադատության սկզբունքներին ու միջազգային օրենքին ներդաշնակ լուծել վեճերը, չմիջամտել պետությունների ներքին գործերին, հարգել ազգային ինքնորոշման իրավունքը, մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները, ինչպես նաև բոլորի հավասար իրավունքները՝ անկախ ցեղի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերություններից, և նպաստել միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային ու մարդասիրական բնույթի միջազգային խնդիրներ լուծելիս:⁷¹

Ըստ ՄԱԿ-ի սկզբունքների քսանմեկերորդ դարում միջազգային հարաբերություններում պետք է գործեն ազատության, հավասարության, համերաշխության, հանդուրժողականության նկատմամբ մնայուն արժեքները: ՄԱԿ-ի գործունեությունը բազմաբնույթ է, նրա ջանքերի շնորհիվ կառավարությունները բազմակողմ պայմանագրեր են կնքել, որոնք աշխարհում ստեղծում են առավել անվտանգ ու առողջ միջավայր, մարդկանց համար ապահովում արդարության և հնարավորությունների առավել ընդգրկուն սահմաններ: ՄԱԿ-ը հիմնարար

⁷¹ ՄԱԿ-ի Հազարամյակի Հռչակագիր 8 սեպտեմբեր, 2000թ. էջ 6:

գործունեություն է կատարում ոչ միայն միջազգային անվտանգության ու խաղաղության ամրապնդման բնագավառում, այլև արդարադատության, միջազգային իրավունքի պահպանման բնագավառներում:

Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. հռչակված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է բոլոր մարդկանց՝ տղամարդ թե կին, հիմնական իրավունքներն ու ազատությունները, այդ թվում կյանքի, ազգային պատկանելության, մտքի, խղճի, կրոնի, աշխատանքի, կրթության, երկրի կառավարման մեջ մասնակցության ազատությունները:

Փաստորեն, անգնահատելի է ՄԱԿ-ի կատարած աշխատանքները խաղաղության, անվտանգության, զինաթափման, աղքատության վերացման, զարգացման, շրջակա միջավայրի պահպանման, մարդու իրավունքների, ժողովրդավարության, խոցելի խավերի պաշտպանության և բազմաթիվ այլ խնդիրների լուծման ճանապարհին:

Միավորված ազգերի կազմակերպության պատմությունը հաստատապես այն ամենի վկայությունն է, որ այդ կազմակերպությունը կարող է կառուցողական ներդրումներ կատարել բանակցությունների և համաձայնագրերի կնքման, զենքի սահմանափակման, հակամարտությունների խաղաղ կարգավորման հարցերում: Այն կարող է կարևոր հենարան լինել ազատության և ազգային անկախության համար ժողովուրդների մղած պայքարում, ինչպես նաև միջազգային կայուն տնտեսական հարաբերությունների վերակառուցման, ժողովրդավարական հիմքերի ձևավորման գործում:

Պատմության փորձը վկայում է, որ ՄԱԿ-ի գործունեության արդյունավետության աստիճանը ուղղակիորեն կախված է նրա մեջ մտնող պետությունների վարած քաղաքականությունից, նրանց կողմից ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթներին հետևելուց: Ամեն անգամ, երբ ՄԱԿ-ի անդամները

միասնաբար կյանքի են կոչել Կանոնադրության հիմնական պահանջները, կազմակերպությունը հաստատել է իր կարողությունը տարաբնույթ խնդիրների լուծմանը ծառայելու առումով: Այսպիսով, ՄԱԿ-ի գլխավոր նպատակներն են՝ պահպանել միջազգային խաղաղությունը և անվտանգությունը, զարգացնել բարեկամական հարաբերությունների ազգերի միջև, համագործակցել միջազգային խնդիրներ լուծելիս ու մարդու իրավունքների նկատմամբ հարգանք խթանելիս և ազգերի գործողությունները ներդաշնակեցնելու կենտրոն հանդիսանալ: ՄԱԿ-ը միջազգային հակամարտությունների ուղիներ է մատնանշում և ռազմավարություններ մշակում այն հարցերի վերաբերյալ, որոնք կարող են անդրադառնալ բոլորիս վրա, այն շարունակում է մնալ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման հիմնական երաշխավորը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին>>, Երևան, 2002թ
2. ՄԱԿ-ի Հազարամյակի Հռչակագիր 8 սեպտեմբեր, 2000թ.
3. <<ՄԱԿ-ի մոդել>>, Երևան, 2005թ
4. ՄԱԿ-ի Կանոնադրություն, ՄԱԿ-ի ՀՏԲ, Հայաստան, 1996
5. <<Միջազգային կազմակերպություններ>>, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002
6. Վ.Քոչարյան, <<Միջազգային իրավունք>>, Երևան, 2002թ
7. Бобров Р.Л., Малинин С.А., Организация Объединенных Нации, Издательство Ленинградского университета, 1960
8. Бодак А. Н., Войнич И. Е., Волчек Н. М., и друг., Всемирная история том 24, <<Истории второй мировой войны>>, Москва, 2002г.
9. <<Внешняя политика Советского Союза в период Отечественной войны>>, том I, М., 1946
10. Дурденевский В. Н., Крылов С. Б., Организации Объединенных Нации, Сборник документов относящихся к созданию и деятельности, М., 1956
11. Ефимов Г. К., Генеральная Ассамблея ООН, Москва, 1969
12. Ефимов Г.К., Устав ООН, Инструмент мира Главная редакция изданий для зарубежных стран издательство Науки 1986
13. История новейшего времени стран Европы и Америки 1918-1945, под ред. Е.Ф.Языкова, Москва, 1989
14. Кант И., К Вечному миру, М., 1989
15. Кожевников Ф. И., А. П. Мовчан., Устав ООН, М., 1955
16. Крылов С.Б., История создания Организации Объединенных Нации , М., 1960
17. Лукашук И.И., Международное право, М., 2008
18. Медведев А. М., Секретариат ООН и требования современности, М., 1962

19. <<О порядке голосования в Генеральной Ассамблее и в Совете Безопасности>>, М., 1965
20. Овинников Р., Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана, М., 1986.
21. <<ООН и поддержание международного мира>>, М., 1973
22. Организации Объединенных Наций, <<Краткий справочник>>, составатели Березовский В.Н., Игнатев В. Л., Титаренко А.А., Шульгин В.В., Межд. Отношения М., 1985
23. Основные сведения об Организации Объединенных Наций, М., <<Международные отношения>>, 1991
24. Основные факты об ООН, Москва, 2005
25. <<Тегеран-Ялта-Потсдам>>-сборник документов, Москва, 1971
26. Федоров В. Н., Совет Безопасности ООН, Международные отношения, Москва, 1965
27. Фельдман Д. И., Яновский М. В., Генеральная Ассамблея ООН, Издательство Казанского университета, 1968
28. Шкунаев В.Г., Организация Объединенных Наций в современном мире, Издательство <<Науки>>, 1976
29. A Framework for Peace in the Middle East Agreed at Camp David., Office of the White House Press Secretary, Sept., 18, 1978
30. <<Basic Facts About The United Nations>> , N.Y., 1989
31. Claude I. L. ,Swords into Plowshares.The Problems and Progress of international Organization. N.Y. 1964,
32. Charter of the United Nations
33. <<Documents of the United Nations Conference on International Organisation San Francisco. United Nations Informations Organisations>>, vol. 11, N.Y., 1945.

34. Everything you Always Wanted to Know About the United Nations by United Nations.

United Nations Department of Public Information, New York, 2008

35. Goodrich L. M., E. Hambo, the Charter of the United Nations, Commentary and

Documents Boston, 1946

36. Kelsen H., The Law of the United Nations, A Critical Analysis of its Fundamental

Problems, L., 1950

37. Maciver R., The Nations and United Nations, N. Y., 1959.

38. Woolsey L. H., The American Journal of International Law 1942

39. <http://www.wfuna.org/>

40. <http://ysuinterlaw.wordpress.com>

41. <http://www.un.org/rights>

42. www.historyofwar.org/articles/wars_iraniraq.html

43. <http://www.cyprus-un-plan.org>

44. www.un.org/russian/basic/aboutun.htm

45. www.unesco.org.

46. www.un.org/tours/

47. www.un.org/terrorism/